№ 92 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՄԱՅԻՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 2 ՄԱՅԻՍԻ № 92

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի
Առանձին համարները ՄԷԿ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում վճարվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք է վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Կուսանաց Անապատի մայրապետ կոյս Հռիփսիմէ Թայիրեանը և միաբան քոյրերը յայտնում են, որ հինգշաբթի, մայիսի 3-ին, Կուսանաց վանքի եկեղեցում տեղի կունենայ հոգեհանգիստ հանգուցեալ մայրապետ

ԻՇԽԱՆԱԶՆՈՒՀԻ

ՅԵՓՐՈՍԻՆԷ ԱԲԱՄԵԼԻՔԵԱՆԻ

մահվան տարեդարձի առիթով։ Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 11-ին, իսկ հոգեհանգիստը ժամը 12-ին։ 301. 1—1

ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ „ՄՇԱԿԻ"

Գաւառներից մեզ ուղղակի առաջարկում են և խնդրում, որ հնարաւորութիւն տանք աւելի շատ տարածելու մեր լոյս ընծայելիք «ՄՇԱԿԻ» քառասնամեակ „Տարագի" յատուկ Ալմանախը։

Զիջանելով և թողնելով մինչև մայիսի 15-ը «ՄՇԱԿԻ» բաժանորդների համար տօնական այս ալմանախի գինը 1 ռուբլի, անհրաժեշտ ենք համարում հետևեալն ազդարարելու՝

1) Նշանակվում է բաժանորդագին 1 ր. մինչև մի որոշ ժամանակ, այն պատճառով, որպէսզի կարելի լինի մօտաւորապէս սահմանել հրատարակվելիք հանդէսի ծաւալը։

2) Ծաւալը որոշելուց յետոյ գալիս է քանակի խնդիրը. չէ՞ որ պէտք է մօտաւորապէս գէթ իմանալ, թէ քանի օրինակ տպագրել։

3) Լոյս տեսնելուց յետոյ եռապատիկ գին է նշանակվում, որովհետև բոլոր ենթադրած քանակն էլ պէտք է համեմատ վճար ունենայ, որպէսզի գէթ մի երրորդականը վաճառվի։

Սրանք տարրական կանոններ են, բայց մեր հայերի համար ժամանակ, սահման, ծաւալ գոյութիւն չունենալու պատճառով առաջ են գալիս և նման պահանջներ։

Ուրեմն ով ցանկանում է բաժանորդագրվել ՅՈԲԵԼԵԱՆ «ՄՇԱԿԻ» քառասնամեակ ալմանախին, թող աճապարէ բաժանորդագրվել փութով։ Կրկնում ենք, մայիսի 15-ից յետոյ դարձեալ 2 ռուբլի։

Նրանք, որոնք ուղարկել են 2 ր., կարող են յետ ստանալ 1 ռուբլին։

Հասցէն՝ БЮРО ПЕЧАТИ. ТИФЛИСЪ. Головинскій пр.. 41.
(ա. օ.) 26. 2—2

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(կ.չ.ու.). տռ. 179. 100—17

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ

«Մշակի» յոբելեանը առիթ է տալիս մեզ կանգ առնելու մի երեւոյթի վրա մեր հասարակական կեանքում։

Դա կուլտուրական ձեռնարկութիւնների յարատեւութեան խնդիրն է։

«Մշակը» քառասուն տարվայ գոյութիւն ունի։

Իսկ շատ են արդեօք մեզանում կուլտուրական գործունէութիւններ, որոնք ունենային յարատեւութիւն։

Դժբաղդաբար շատ քիչ։

Մի՞թէ ծանօթ չեն ձեզ այս բառերը՝ «կար և չը կայ այժմ, գեղեցիկ սկիզբ ունեցաւ, գրաւիչ յոյսեր տուեց, բայց չը դիմացաւ, չապրեց և անհետացաւ ասպարէզից»։

Անկասկած՝ այդ բառերը շատ և շատ ծանօթ են։

Դա մեր բազմաթիւ ծրագիրների և ձեռնարկութիւնների պատկերն ու ճակատագիրն է։

Վերցրէք Թիֆլիսը, Էջմիածինը, Երեւանը, Բագուն, Պօլիսը և մեր բոլոր գաւառական ոստանները։

Վերյիշեցէք, թէ որքան հրապուրիչ ծրագիրներ են յղացվել այդ բոլոր տեղերում, մտաբերեցէք, թէ որքան ողջոյններ և շնորհաւորութիւններ են տեղացել կուլտուրական զանազան ձեռնարկութիւնների սկզբնաւորութեան և բացման օրերը։

Ո՞ւր են, սակայն, այդ ծրագիրները այժմ, ո՞ւր են ձեռնարկութիւնները։

Նրանք չը կան.

Մենք այն ժամանակ ուրախացանք, լսելով և տեսնելով որ մեր երկրի այս կամ այն կէտում ասպարէզ է եկել կուլտուրական գործողների մի կազմակերպութիւն, բացվել է գրադարան, հիմնվել է կրթարան, կազմվել է գրական համախմբակցութիւն, սկսվել է հրատարակչական մի գործ, կազմակերպվել է մանկավարժական դասընթացք, կառուցվել է մի արհեստանոց, հաստատվել է թատրոնական բեմ, կազմվել է երգեցիկ խումբ, սկիզբ է դրվել երկրի ուսումնասիրութեան, և այլն և այլն։

Եւ այժմ նրանք չը կան։

Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով։

Մէկ չէ պատճառը, անշուշտ, այլ մի քանիսն են։

Աննպաստ և ձախորդ արտաքին հանգամանքները վնասել են շատ և շատ համակրելի գործերի։ Բայց յաճախ մենք տեսել ենք, որ անաջողութեան գործում շատ խոշոր դեր են կատարել մի կողմից ընդհանուր մեր կուլտուրական զարգացման պակասութիւնը, միւս կողմից գործողների թուլութիւնը և ղեկավար հանդիսացած անձերի լքումը և վերջապէս մեր շրջապատի խեղդող և մեռցնող ազդեցութիւնը։

Մեր երկրում շատ դժուար է յարատեւ պահպանել կուլտուրական մի ձեռնարկութիւն։

Գործողները ոգևորվում են ձեռնարկութեան սկզբի օրերում, իսկ այնուհետեւ սառչում են ու հեռանում։ Հասարակութիւնը՝ փոխանակ փայփայելու և խնամելու այդ ձեռնարկութիւնը՝ դառնում է անտարբեր դէպի նա, իսկ յաճախ և շատ յաճախ նրա շրջաններում հանդէս են գալիս տարրեր, որոնք քայքայում են սկսածը և իրականացրածը։

Ինքը, «Մշակ» լրագիրը, որ կարողացել է դիմանալ մինչև մեր օրերը և ներկայումս իր յոբելեանի տօնակատարութեան նախօրեակումն է գտնվում, այնպիսի սոսկալի օրեր է տեսել, այնպիսի սրտաճմլիկ վշտեր է տեսել, որոնց նկարագրութեան համար հատորներ են հարկաւոր։

Մեծ, ծանր, բարդ և պատասխանատու գործը անցել է անվերջ փշերի և անթիւ խաչերի խիտ անտառներով, թանգարժէք զոհաբերութիւնների և գաղափարական նահատակութիւնների շարքերի միջով, պատառոտելով հալածանքի, թշնամութեան, դաւերի, որոգայթների և ամենատեսակ բանսարկութիւնների հիւսած այն դժոխային ցանցերը, որոնք ասպարէզ են նետվել լուսաւոր և ազնիւ գործը խեղդելու ու մեռցնելու։

Յարատեւութիւն, կուլտուրական գործի յարատեւ կեանք և գոյութիւն։

Մանաւանդ մեզանում։

Հեշտ է ասել, իսկ իրագործել՝ ոչ։

Նա դժուար է իրականանում նոյն իսկ լուսաւոր երկիրներում, իսկ մեր պայմանների մէջ նա անկարելիութեան սահմաններն է շօշափում, երբ մանաւանդ խնդիրը վերաբերում է այնպիսի մի գործի, ինչպէս հրապարակախօսութիւնն է, որը անցնում է անվերջ մաքառումների, սուր պայքարների, անխնայ ընդհարումների և ճիւաղային հալածանքների մէջ։

Այդպիսի հանգամանքներում ձեռք բերված յարատեւութիւնը՝ կուլտուրական հազուագիւտ մի յաղթանակ է, կուլտուրական հերոսութեան մի պատմական գործ։

Այդպիսի յարատեւութիւնը ձեռք է բերվում աննկարագրելի մեծ և տոկուն աշխատանքով, գաղափարական ազնուութեան խորագոյն զգացումներով, զոհաբերութիւններ և զրկանքներ կրելու պատրաստականութեամբ։

Ահա թէ ինչու թանգ են կուլտուրական յարատեւութեան երեւոյթները։

Մանաւանդ մեզանում, մեր սարսափելի իրականութեան մէջ, հուր ու ջրի, սուր ու կայծակի, դժոխային արհաւիրքների յուսահատական ժխորի մէջ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
30 ապրիլի

Պետերբուրգ.—Հրատարակվեց Բարձրագոյն հաստատված կարգը, վերաբերեալ Մոսկվայում Ալեքսանդր III Կայսրի արձանի բացմանը, որին ներկայ են լինելու Նորին Կայսերական Մեծութիւնները։

Բերլին.—Պետական կանցլերը վերադարձաւ առաւօտը։ Մարշալ ֆոն-Բիբերշտէյնը և Կիդերլէն-Վեխտէրը կը գան ցերեկով։

Ռէյխստագի բիւջէտային մասնաժողովը հաստատեց ծովային օրինագիծը կառավարական խմբագրութեամբ։ Հակառակ ձայն տուին սոցիալ-դեմոկրատները։ Լեհերը բացակայ էին։

Լանդտագը սոցիալ-դեմոկրատ Բորհարդտի բողոքի համաձայն՝ իրան նիստի դահլիճից անցեալ հինգշաբթի օրը արտաքսելու առիթով անուանական քուէարկութեամբ արտաքսումը կանոնաւոր գտաւ։ Հակառակ ձայն տուին միայն սոցիալ-դեմոկրատները. ձեռնպահ մնացին երկու դանիացի և մի լեհ։

Բարոն Բիբերշտէյնը մեկնեց իր կալուածքը, որտեղից շուտով կը մեկնի Կ. Պօլիս յանձնելու սուլթանին իր հաւատարմագրերը։

Ռէյխստագն ընդունեց բիւջէտային մասնաժողովի եզրակացութիւնը մենամարտի մասին, լրացնելով այն սոց.-դեմոկրատների առաջարկութեամբ՝ թէ մենամարտը մերժող օֆիցէրը չէ կարող այդ պատճառով արտաքսվել զօրքից։

Բիւջէտային մասնաժողովի մէջ ծովային մինիստրը շօշափեց դիրիժաբլների և աէրոպլանների նշանակութիւնը, յայտնելով թէ մինիստրութիւնը հետաքրքրութեամբ է հետեւում աէրոպլանների զարգացմանը, կատարելով մի շարք փորձեր այնպիսի գործիքներով, որոնք կարող են բարձրանալ նաւերից և իջնել նրանց վրա։

Տաուրիրտ.—Ֆրանսիացիների և բէնիուազէն ցեղի միջև սկսվեց ճակատամարտ։

Տանժէր.—Գիշերս ծով մտան սպանական երկու ռազմանաւ։

Բելգրադ.—Հեղինակաւոր աղբիւրից հաղորդում են, թէ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ կառավարական կուսակցութիւնը մի ձայնի առաւելութիւն ունի, Միլովանովիչի կաբինէտը մտադիր է հրաժարվել։

Վիեննա.—Սոցիալ-դեմոկրատներից գումարված կանանց կոնգրէսը խօսեց յօգուտ կանանց ընտրողական իրաւունքի և ընդհանուր ընտրողական իրաւունքի։ Կառավարական կոմիսարը արգելեց լեհական սոցիալ-դեմոկրատների ներկայացուցչուհուն խօսել լեհերէն։

Ասունսիօն.—Հաստատվում է կառավարական զօրքերի յաղթութիւնը։ Սպանվել է յեղափոխական պարագլուխների մեծ մասը։ Յեղափոխութիւնը համարվում է վերջացած։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
30 ապրիլի

Պեկին.—Տանշաօյի ֆինանսական քաղաքականութիւնը ենթակայ է չինական մամուլի և ազգային ժողովի խիստ յարձակումներին։ Լուրեր են պտտվում, թէ գուցէ Տանշաօյը հրաժարական տայ։

Գիրին.—Պեկինի խորհրդակցական պալատը մերժեց 15 հասարակական կազմակերպութիւնների միջնորդութիւնը՝ բեկելու պալատի ընտրութիւնները, որոնք կատարվել են ապօրինաբար, առանց ազգաբնակութեան մեծամասնութեան։ Քաղաքացիների բազմամարդ միտինգը, լսելով պալատի պատասխանը, որոշեց Պեկին պատգամաւորներ ուղարկել, յանձնարարութեամբ՝ ամեն կերպ գլուխ բերել նոր ընտրութիւնների գործը։ Մերժման դէպքում վճռված է բոյկոտի ենթարկել պալատը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
30 ապրիլի

Թեհրան.—Զենջանից Համադան անցան բախտիարները։ Գործակալութեան տեղեկութեան համաձայն զօրամասը նորից մեկնել է ապստամբների դէմ։

Թաւրիզ.—Սուլթանիէում կանգ առած կառավարական զօրքերը վերադարձան Ղազվին, ուր նրանց գալուստին սպասում է Եփրեմը՝ Համադան շարժվելու համար։

Ջուլֆա.—Ուրմիայից տեղս եկած ռուսաց զօրամասի բժիշկը հաղորդում է, որ Զախրիկում և ուրիշ տեղերում Թիւրքաց զօրքերի մէջ տարածված է մենինգիտ հիւանդութիւնը, որ մեծ թւով զոհեր է տանում։ Երևան է հանված նաև խօլերայի մի քանի դէպք։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
30 ապրիլի

Հռոմ.—Իտալական մամուլը ասում է, որ երեք գրաւված Կարպատոս, Կասոս, Ռոդոս և Ստամպալիա կղզիները իտալացիների իշխանութեան տակ անցնելուց յետոյ Թիւրքիան կտրվում է Միջերկրական ծովից և զրկվում է Աֆրիկա նաւեր ուղարկելու հնարաւորութիւնից։

Տօբրուկ.—Հետախուզիչ զօրամասերից մէկը Հաղիհաղի մօտերը ընդհարվեց Թիւրքերի հրամանատարութեան տակ գտնվող բեդուինների հետ։ Իտալացիք յարձակվեցին և ջարդեցին թշնամուն։ Սպանվեցին աւելի քան 100 բեդուին, մնացածները փախան։ Իտալացիներից սպանվեց մի օֆիցէր և երկու զինուոր, երեք հոգի վիրաւորվեցին։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Դաշնակցականաց խուսափումը.—Պատրիարքին հակառակ ճիգերը.—Պաշտօնական յայտարարութիւն.—Պատրիարքը կը բանակցի կոմիտէին հետ։

Կ. Պօլիս, 20 ապրիլ

Դիմակազերծութեան օրերու մէջ ենք։

Ինչ որ մարգարէ ըլլալու հարկ չկար գիտնալու համար, հիմա կատարուած իրողութիւն մըն է, և Դաշնակցութիւնը իր ամբողջ շարքերուն մէջ ողբ ու կոծի արտայայտութիւններով կը խոստովանի, թէ խաբուած է։

Իթթիհադը չարաչար խաբած է Դաշնակցութիւնը, խոստանալով շատ մը բաներ... որոնց առաջինը ու շօշափելին և տեսանելին էր հայ մէբուսներու համար խոստացուած 20 թիւը, որ 16-ի իջաւ, յետոյ 11-ի—այսինքն անցեալ տարուանին չափ—և սակայն հիմա կը տեսնուի, թէ նոյն իսկ այդ ալ շատ կը համարին, և քանի մը տեղերու մէջ, ուր հայեր ընտրուած էին նախորդ շրջանին, այս անգամ հայ չպիտի ընտրուին։

Սիսի (Կօզան) հայ մէբուսին տեղ թիւրք մը ընտրուած է, որով հայք աթոռ մը կորսնցուցած են անվրէպ կերպով։ Տակաւին չեն ընտրուած Վանայ և Մուշի երեսփոխանները, այդ շրջաններն ասկէ առաջ մէկ մէկ երեսփոխան ունէին։

Երկուքին համար ալ կասկածելի շշուկներ կան, և ասոնք բոլորովին կահարեկեն Դաշնակցութիւնը... որ իր չարաչար խայտառակութիւնը և կրած անօրակելի բարոյական պարտութիւնը արդարացնելու համար իր հայհոյութեանց ու ստախօսութեանց մեծ քրմապետին՝ Վռամեանի կոչում բրած է, և անիկա իր Աքիլեան վրանը թողած՝ պայքարի մը ձեռնարկած է, համոզելու համար դաշնակցական «տերբերը», թէ այս ամօթալի ձախողութեան պատասխանատուն «կեդրոնն» է, որ դաշնակցական հովանաւորութեան չէ համակերպած և առանձին գործած է։

Զաւարեանի հաւաստումները, որով Իթթիհադը բացարձակ կերպով խաբերայ կը հռչակուի, և Վռամեանի յայտարարութիւնները, որոնք այդ ձախողումին պատասխանատու կը բռնեն կեդրոնը, իրար կը չէզոքացնեն և իրար սուտը կը հանեն։

Սուտն ու կեղծիքը սուտով պարտկելու համար իրենց բրած ջանքերն ալ ահա այսպէս իրենց նպատակին կը վրիպին, և իրենք իրենց մէջ հակասական՝ կատարելապէս ցոյց կուտան Դաշնակցութեան կատարած անօրակելի ու դատապարտելի դերը։

⁂

Օրուան ծանրակշիռ դէպքերէն մէկն ալ պատրիարքին դէմ բացուած ծանր պայքարն է։ «Լուսարձակ» առաջին նախայարձակը եղաւ, հրատարակելով թէ Արշարունի պատրիարք Բասարմաճեանի և Վռամեանի յանձնարարութեամբ, Իթթիհադի ազդեցիկ անդամներէն մէկ քանին հրաւիրած է, ըսելու համար թէ մինչև հիմա կատարուած ընտրութեանց մէջ զրկանք եղած է թուական համեմատութիւնը չյարգելով և անօրէն միջոցներ գործածելով։ Պատրիարքն իբր թէ այս առթիւ պիտի խնդրէ եղեր, որ Վանայ և Մուշի ընտրութիւններու մէջ հայոց իրաւունքը յարգուի... այսինքն երկու դաշնակցական ևս ընտրուին։

Հիմա պօլսահայ մամուլը միահամուռ —բացի «Ազատամարտէն»—կը յարձակի պատրիարքին վրայ և բացատրութիւն կը պահանջէ անկէ, մեկնութիւն պահանջելով այն հակասութեան համար, որ կայ պատրիարքին ասկէ առաջ ազգ. ժողովին մէջ բրած յայտարարութեան և իր այս ընթացքին միջև։

Պատրիարքարանը պաշտօնական յայտարարութեամբ մը իբր թէ հանրութիւնը լուսաբանելու փորձ մը բրաւ։

Ահա անոր օրինակը.

«Սրբազան պատրիարք հայրը, նկատողութեան առնելով որ օսմ. խորհրդարանին անդամակցելու համար՝ մինչև ցարդ 8 երեսփոխան ընտրուած են միայն, նոյն իսկ նախորդ անգամի թիւէն աւելի պակաս, թէ պաշտօնական մարմիններէ հասած տեղեկութեանց համաձայն՝ ընտրութեանց մէջ զանազան միջոցներ ի գործ դրուած են, հայ տարրը զրկելու համար իր արդար իրաւունքէն, ինքն ստիպուեր է՝ ինչպէս նախապէս թաքրիր մատուցելով Բ. Դրան, այս անգամ ևս բանիւ բերանոյ բանակցիլ պատկանեալ վարիչ մարմնոյ հետ, և դիտել տալով, որ Թիւրքիոյ հայոց թուոյն համեմատութեամբ պէտք էր որ գէթ 20 երեսփոխան ընտրուէին, պահանջած է, որ ընտրութիւնք վերջ չգտած՝ կարևոր միջոցները տնօրինուին՝ զրկանքը դարմանելու համար. եթէ ոչ ինքն յանուն ազգին բողոքող պիտի մնայ կատարուած իրողութեան դէմ և չպիտի կարենայ ընդունիլ, որ այս պայմաններու մէջ ընտրուած քանի մը սակաւաթիւ ազգայինք՝ իբր հայ երեսփոխան կարենան բազմիլ օսմ. խորհրդարանին մէջ։

«Իսկ բոլորովին անհիմն է հայ թերթի մը հրատարակած այն լուրը, որու համաձայն իբր թէ սրբազան պատրիարքը մասնաւոր թեկնածութեանց վրայ այս տեսակ ձեռնարկի մը դիմած ըլլայ և թէ այդ առթիւ մասնաւոր անձերու ընտրութեան խնդիր յուզուած լինի»։

Այս յայտարարութիւնը հերքում ըլլալէ

աւելի հաստատութիւն մըն էր։ Պատրիարքը՝ կառարկէր ասկէ առաջ, թէ սահմանադրութեան տրամադրութիւններուն մէջ ոևէ յօդուած մը չկայ, որուն վրայ հիմնուած կարենայ դիմում ընել, և կը փնտռէր տեղ մը, որուն կարենար դիմում ընել, քանի որ ինքը կուսակցութեանց հետ բանակցութեան չէր կրնար մտնել։

Հիմա պատրիարքը, կերևայ թէ, գտած է դիմում կատարելու տեղը, որ «վարիչ մարմին» անունով կը մկրտուի և որ ուրիշ վարչութիւն չէ, եթէ ոչ նոյն ինքն «Իթթիհատ վէ Թերաքքը» կուսակցութեան վարչութիւնը։

Պատրիարքը ինչպէս կրնայ հիմա դիմում կատարել այս մարմնոյն և ընտրութեան արդիւնքին վրայ ազդելու փորձ մը ընել, քանի որ չէզոքութեան հաստատ ուքզում ունէր։

Ուրեմն պատրիարքը կորուսած էր իր զէնքը... դաշնակցականաց գործիք եղած էր, արդարև դիմում կատարելու փորձ ընելով կոմիտէին առջև։

Այս դիմումը, որ իբր թէ «մասնաւոր թելադրութեանց» վրայ չէ որ կը կատարէր սրբազան պատրիարքը, ուրիշ բանի չպիտի ծառայէր, սակայն եթէ ոչ մասնաւորներու շահերուն, և այդ մասնաւորները յայտնի է թէ որոնք են։

Պաշտօնական այս յայտարարութիւնը փոխանակ մեղմելու Արշարունի պատրիարքին դէմ բացուած պայքարը՝ աւելի սաստկացուց, և Կ. Պոլսոյ մամուլի մէջ այս անգամ տեսնուեցան աւելի բուռն քննադատութիւններ, որոնք այս յայտարարութեան հաւաստումներուն վրայ հիմնուած են։ Այսօր ալ կը սպասուի, որ հարցապնդում կատարուի ազգ. ժողովի մէջ։

Երէկ երեկոյ պատրիարքին անձնական մտերմութիւնը վայելող մէկը, զանազան շրջանակներու և լրագրական գրասենեակներու մէջ շրջագայելով, կէսպաշտօնապէս կարգ մը յայտարարութիւններ ըրած է։ Այս յայտարարութիւնները ցոյց կուտան, թէ պատրիարքին միտքը չէ արտայայտուած պաշտօնական յայտարարութեան մէջ և պատրիարքը զոհ գացած է դիւանական էնտրիգներու կամ խմբագրական ապիկարութեան մը։ Ցայտարարութեան մէջ «վարիչ մարմին» բացատրութիւնը խաղ մըն էր, և պատրիարքը պիտի դիմէր ոչ թէ այլուր, այլ ուղղակի Բ. Դուռ, ընտրական զեղծումներու համար գաւառներէն ստացած տեղեկութիւններու վրայ՝ բողոքելու համար հայոց եղած զրկանքներու մասին և թուական համեմատութիւնը յարգուած չըլլալուն համար և ոչ մէկ տեղ։ Պատրիարքն իր այս դիմումը կարդարացնէ սա պատճառաբանութեամբ, որ ասկէ առաջ վարչութեան որոշումով գաւառները շրջաբերականներ խրկուած էին և գաւառական վարչութեանց ուշադրութեան ներկայացուած էր ընտրական գործը և յանձնարարուած էր հսկել հայոց ընտրական իրաւանց գործադրութեան համար։

Հիմա՝ երբ գեղծմանց դէմ բողոքներ կուգան, պատրիարքարանը պարտաւոր է բողոքել գէթ ապօրինութեան դէմ, և այդ է, որ կընէ պատրիարքը։

Հակառակ սակայն պարտկող և արդարացուցիչ բացատրութիւններուն, այսօրուան թերթերը կը հրատարակեն, թէ երէկ պատրիարքին այցելած է Պոլսոյ երեսփոխան Ահմէդ Նէսիմի-բէյ, յանուն Իթթիհադի կեդրոնական վարիչ մարմնոյն, և թէ պատրիարքը բողոքած է խիստ կերպով՝ անիրաւութեանց և ապօրինութեանց դէմ, որոնք գործուած են ընտրական պայքարի միջոցին պարզապէս հայերը զրկելու և պակաս թուով երեսփոխան տալու համար, և ի վերջոյ իբր թէ կրկնած է այն սպառնալիքը, թէ ընտրուած հայ երեսփոխանները հայ ազգին ներկայացուցիչ չպիտի ճանչցուին։

Ահմէդ Նէսիմի-բէյ իբր թէ իրաւունք տուած է պատրիարքին բոլոր բաժններուն և աւելցուցած է, որ իրենք ալ գիտեն, թէ այդպիսի անիրաւութիւններ գործուած են, սակայն կը ցաւի (!!), որ քիչ մը թոյլ վարուելով չկրցան անոնց առաջքն առնել։ Ցետոյ խնդրեր է (!!), որ պատրիարքը ընտրուած հայ երեսփոխաններուն մասին իր սպառնալիքը չգործադրէ։

Պատրիարքը իբր թէ բողոքած է նաև հայ երեսփոխաններու թիւին կրճատման դէմ և պահանջած, որ գոնէ 15—20 երեսփոխան տրուի, քանի որ ատիկա ազգին բացարձակ իրաւունքն է։

Ահմէդ Նէսիմի-բէյ, ցաւ յայտնելով—ուրիշ բացատրութեամբ՝ մօրուքը խնդալով—կարգ մը արդարացուցիչ բացատրութիւններ և... բօլ-բօլ խոստումներ տուած է չորս տարի վերջը կատարելի ընտրութեանց համար։ (Ապրողը կը տեսնէ)։

Ինշալլաններով եւ Մաշալլաններով կերևայ թէ Իթթիհադին ներկայացուցիչը և պատրիարքը իրարմէ բաժնուած են։

Ասոնք բնական է թէ ոևէ արդիւնք չեն կրնար ունենալ ընտրութեանց հետևանքին վրայ, սակայն կը հաստատեն, թէ Արշարունի սրբազան արդարև չի գիտեր, թէ ինչ կընէ։

Կայրէ ինչ որ պաշտած էր, և կը պաշտէ՝ ինչ որ այրած էր։ Շաւայլ

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Քիւրդերը չորս հայեր կը սպաննեն.—Աղթամարի կաթող. փոխանորդ Եղնիկ վրդ. ապրիլ 1 թուականով հետևեալը կը հեռագրէ պատրիարքարան. «Նախորդ ամսոյ 25-ին Կարճկանի Միր գիւղացի Մինաս Աւետիսեան, Սիմէօն Խաչատուրեան, Ուրթապ գիւղէն Գասպար և ուրիշ հայ մը քիւրդերու կողմէ սպաննուեցան։ Ժողովուրդը յուսահատ և անպաշտպան վիճակի մէջ կը գտնուի»։

Ցաւալի է, որ մինչև ցարդ ոևէ ձեռնարկ չէ եղած Անատոլուի մէջ, սիստեմատիկ կերպով կատարուած այս ոճիրներուն վերջ տալու համար։ Արդեօք կառավարութիւնը երբ պիտի պատժէ այդ աւազակները, որոնք դժբաղդաբար կը պաշտպանուին տեղական իշխանութեանց կողմէ։ Քիչ մը բարեացակամութիւն միթէ պէտք չէ տածուի գոնէ դժբաղդ հայութեան համար։

◆ Մինաս Չերազի յոբելեանը.—Կեդրոնի կուսակցութիւնը որոշած է Գաբրիէլ Նորատունկեանի նախագահութեամբ յոբելեանական յանձնաժողով մը կազմել, տօնելու համար հայ մեծ գործիչին՝ Չերազի յոբելեանը, երբ անոր երեսփոխանութեան ընտրութիւնը անկարելի ըլլայ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ՑԱՒԵՐԻՑ

IX

16 րուբլի 16 կոպէկ

Այո, հէնց այդքան միայն, բայց ոչ թէ մէկ օրում, մէկ շաբաթում, ամսում կամ տարում, այլ, այլ... Ասել, թէ այդ հսկայական վաստակի, հոգու, մտքի վարձատրութեան այդ գումարի գոյացման ճիշդ ժամանակը... Գուցէ երկինքը պատռվի, վարագոյրի նման երկու կէս լինի, ճիշդ այնպէս, երբ խաւար ամբոխի մոլի աղաղակների տարափի տակ Յիսուսի անարդաբօրէն խաչման ժամանակ եղաւ. բայց այդպէս չի լինի, ոչ, որովհետև մենք աւելին անելու ընդունակ չենք։

Հոգու և մտքի այդչափ վարձատրութիւնը եղել է ամբողջ 25 երկար տարիների ընթացքում։

Բարի եղէք քիչ հեզութիւն կրելու, 25 տարին բազմապատկեցէք 365-ի վրա, այնուհետև բաժանեցէք 16 ր. 16 կ.-ի վրա և տեսէք թէ օրը քանի... ախ, ներողութիւն... քանի օրին է մի կոպէկ ընկնում, և այդքանով՝ 5—6 օրը մէկ կոպէկով ապրել է մեր տաղանդաւոր բանաստեղծներից մէկը. բայց այդպէս ապրել չի լինի և ոչ մի հնարաւորութիւն էլ չի լինի, և, ի հարկէ, նա դրանով չէ ապրել, այլ գրելը, միտքը, հոգու բանկումները մի կողմ՝ պարապ ժամանակի թողած, ուրեմն ստիպված չը լինի 5—6 օր մէկ կոպէկով ապրել, այսինքն քաղցից մեռնել, գործակատար է դարձել, որը շատ թէ քիչ ապահովել է նրան իր առօրեայ հոգսերից։

Իսկ ով է վնասվել, ինչն է ունեցել անդառնալի կորուստ, այդ մենք ենք և մեր գրականութիւնն է։

25 տարի աշխատել և իր այդքան գըրուածների դէմ ստանալ հօնօրար միայն այդքան...

Այլ է, եթէ այդ գրողը հէնց այդքանի միայն արժանի լինի. բայց դժբաղդաբար այդպէս էլ չէ. մենք նրան սիրում, պարծում ենք նրա բանաստեղծութիւններով, նոյնիսկ յոբելեանական տօն կատարեցինք։

Ահա ինչպէս ենք մենք վարձատրում մեր գրողներին։

Մենք չենք վարձատրում, այլ վաշխառուների նման կպած նրանց մարմնից՝ ծծում ենք նրանց վերջին կաթիլ արիւնը։ Մենք ասում ենք նրանց.

— Ողի՞նչ, մի կերպ ապրիր և գրիր մեզ համար։

Այդտեղ էլ մենք չանգործում ենք, ոչինչ չը ցանած հնձում ենք։

Պատկերը կատարեալ լինելու համար ասենք, որ ռուսաց «Русское Слово» օրագիրը իր ֆէլիէտոնիստին միայն տարեկան տալիս է 30,000 րուբլի։

Հայ գրողը 25 տարվայ մէջ ստանում է 16 ր. 16 կ., իսկ ռուս գրողը՝ 750,000 ր.։

Տարբերութիւնը հսկայական է, նոյնիսկ աներևակայելի, բայց ով է այդ ամենի պատճառը։

Մեղաւո՞ր է հայ լրագիրը, որ չէ վարձատրում իր աշխատակցին, իր գրողին. չեմ կարծում այս բանի վրա մէկն ու մէկը ակնարկի, որովհետև հայ լրագիրը ինքն անգամ գրօշների կարիք է զգում։

Պատճառը բոլորովին այլ է՝—մեր անընթերցասիրութիւնը։

Մենք հայ գրքին, լրագրին փող տալու սովորութիւն չունենք. մի գրքը ամենաքիչը 100 մարդ է կարդում, և այդ դէպքում, ի հարկէ, կոպէկ չենք տայ գրքի։

Եւ որովհետև այդպէս է, ժողովուրդը ինքը չէ պահում հայ գրողին, պէտք է ուրեմն մի ընկերութիւն, ֆօնդ ունենանք, որ հոգայ հայ գրողի նիւթականը։

Սպասում ենք դրան։

Արշալոյս Տէր-Յովհաննեան

ՅՈՎՀ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Մեծ ուրախութեամբ կարդացի բանաստեղծ Յովհ. Յովհաննիսեանի գրական 30-ամեայ գործունէութեան յոբելեանական յանձնաժողովի կոչը՝ ուղղված հայ հասարակութեանը։

Հրապարակի վրայ է դրված մի համակրելի յոբելեան, որը կատարվելու է առաջիկայ մայիսի 20-ին։ Մինչև այդ օրը ըստ երևոյթին հայ հասարակութիւնը յարգելի յոբելեարին մեծարելու է անթիւ շնորհաւորութիւններով, սրտալի ուղերձներով, ճառերով, նուէրներով և այլն... Գուցէ միայն այդքան։

Բայց ի նկատի ունենալով որ յարգելի բանաստեղծն ևս իր նիւթականով բացառութիւն չէ կազմում մեր բոլոր հեղինակներից, ուստի անհրաժեշտ է, որ հայ հասարակութիւնը չը բաւականանայ լոկ փղերգներով և գովասանական թերթօններով, այլ և նպաստէ բանաստեղծի նիւթականին, որով հեղինակն ազատված կը լինի առօրեայ հոգսերից և նուիրված՝ միմիայն անզուգական գրչին։

Հարցի այս կողմի մասին մտածելու պարտքը մասնաւորապէս ընկնում է բանաստեղծի բազմաթիւ աշակերտների վրայ, որոնք ցրված են Կովկասի և լայնածաւալ Ռուսաստանի զանազան քաղաքներում և գիւղերում այլ և այլ պաշտօններով։ Եւ նրանք պէտք է օգտվեն առիթից և երախտամատոյց լինեն դէպի իրենց սիրելի ուսուցիչ-բանաստեղծ յոբելեարը։

Յոյս ունենք և սիրում ենք հաւատալ, որ նրանք, որոնք իրենց տանջանքի և վշտի օրերում մխիթարվել են «Լուռ կաց, սիրտ իմ, այս աշխարհում դարդ իմացող չես գտնի...» երգով, չեն մոռանայ նաև երգի հեղինակին և ամեն կերպ կաշխատեն դրամական նուիրաբերումներով սիրելի յոբելեարը պսակել մեզ համար ցանկալի աջողութեամբ։ Աստ. Վարդանեան

Թաղա գիւղ

ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒՆԵՐԻ ՄԻ ԴԱՍԸ

Մեր գաւառներում, մանաւանդ գիւղերում քահանաներն են համարվում գիւղի հասկացող մարդիկը, նրանք են գիւղի առաջնորդներն ու «կապ» բանողը։ Ուստի ինչ չափով որ աշխատում ու ձգտում ենք գիւղերին տալու՝ փորձված, կրթված, բարոյական և այլ բարեմասնութիւններով օժտված ուսուցիչներ՝ մատաղ սերունդն ու դպրոցը դէպի բարձրն ու վսեմը տանելու, նոյնպիսի չափով և նոյնիսկ աւելի պիտի աշխատենք մեր գիւղերին տալ արժանաւոր քահանաներ, որոնք ունենան բաւարար կրթութիւն։

Քահանաները մեծ մասամբ առաջ են եկել և այժմ էլ ծնվում ու առաջ են գալիս տիրացուների աւազանից. այդ իրողութիւնն արդէն 1910 թւի «Մշակի» № 143-ում «Քահանաների յետամնացութեան գլխաւոր պատճառը» յօդուածովս փաստօրէն ապացուցել եմ և որի դէմ ոչ մի թեր ու դէմ կարծիք չէ եղել։

Ես ասել եմ, որ տիրացուն ապագայ քահանայացուն է. տիրացու Մեսրոպը տէր-Մեսրոպ է դառնալու։ Հետևապէս կրթված և ժամանակակից տէր-Մեսրոպ ունենալու համար՝ նախ պէտք է ունենանք կրթված և ժամանակակից տիրացու Մեսրոպ. տարբերութիւնը պիտի լինի միմիայն արտաքինի, տարազի մէջ։

Սակայն հարցը սա է (որի վրայ կուզէի և մի փոքր ծանրանալ), թէ արդեօք կրթված և այլ արժանաւորութեամբ օժտված քահանայութեան ձգտող Մեսրոպները կարող են հանդուրժել այն աւելի քան աննպաստ պայմաններին և մտնել այնքան ստորացնող «տիրացու» անուան տակ, ընկերակցել Պօղոսներին, Մուկուչներին, Կիւրեղներին, Մացակներին, հռչակաւոր Տիգրաններին, Գրիշաներին և այլ նման անձանց, որոնցով հարուստ են տիրացուական շարքերը. ո՛չ, ամենևին ոչ։ Ինչո՞ւ։ Ահա պատճառները. Նախ որ եկեղեցիներում չը կայ կանոնաւոր ու բաւարար ռոճիկ, որը 10—15 րուբլուց չի անցնում։

բ) Տիրական մուտքերը անորոշ են և պիտի ստացվեն ոչ թէ ծխից անմիջապէս, այլ քահանայից, որի քմահաճոյքից էլ կախված է տիրացուի հասանելիքի մանադրութիւնը, և միայն սակաւաթիւ բարեխիղճ քահանաներ են իրանց ստացածի 5-րդ մասը հասցնում տիրացուին անմիջապէս, իսկ քահանաների մեծագոյն մասը իր ստացածի $^1/_{10}$ մասն է տալիս, ամիսներով մօտը թուխս պահելով և խնամքով խուզումներ անելով...։

գ) Գանձանակի—այդ «կամաւոր մուրացկանութեան» (տես «Մշակ» № 209 1910 թ.)—և այլ մուտքերի տգեղ ձևերը կրթված քահանայացուին ներկայ բարդ ու բազմապահանջ կեանքում նիւթական բաւարարութիւն չեն կարող տալ։

դ) Ամենագլխաւոր պատճառն է տիրացուի խախուտ ու անհաստատ դրութիւնը, որովհետև քահանան կամ երէցփոխը տիրացուի վրայ նայում են ուղիղ այնպէս, ինչպէս տէրերը իրանց ծառաների։ Եւ որովհետև մեր եկեղեցիների միաբանութեան մէջ իշխում է աւելի անմիաբանութիւնը, քահանան իր ընկեր քահանայի կամ երէցփոխի դէմ յաճախ լարված է լինում, ուստի և տիրացուն իսկոյն ենթարկվում է մի կողմի թշնամութեանը. եթէ քահանաների կողմն է, երէցփոխն է զրկում ռոճիկից և արձակում, իսկ եթէ երէցփոխի կողմն է՝ քահանայից է ամբաստանվում, նիւթապէս զրկանքներ կրում և նոյնպէս մատնվում արձակման։

Թէև այս մասին հանգուցեալ առաջնորդը 1907 թ. № 580-ում մի գրութեամբ տիրացուների արձակումն ու ընդունելութիւնը վերապահում է վիճակային ատեանին, սակայն շուտով այդ էլ գործադրութիւնից հանում են։

Պարզ է, որ այսպիսի ամենաանախանձելի դրութեան մէջ և աննպաստ պայմաններում կրթված, դպրոցաւարտ, պատուաւէր երիտասարդը, քահանայացու Մեսրոպները հեռու-հեռու կը փախչեն, կառնեն այդ պաշտօնը, տեղի տալով այնպիսի անարժանների, որոնք կեանքի այլ ասպարէզներում ընդունակութիւն չունենալով որևէ գործի կամ փոքրուց քէլեխի սովորելով ձգտում են տէրտէր դառնալ՝ արդարացնելով այն տխուր դարձուածքը թէ՝ «մարդ չը դառայ, տէրտէր դարձայ»։ Այն ինչ տէրտէրը նախ պէտք է մարդ լինի, ապա թէ տէրտէր։

Որ կրթված մարդիկ խուսում, հեռու են փախչում տիրացուեթեան պաշտօնով քահանայութեան հասնելուց, ամենապերճախօս ապացոյցն այն է, որ Թիֆլիսի մօտ 45—50 տիրացուների մէջ չը կայ ոչ մի դպրոցաւարտ, որոնցից միայն 1—2 հոգի են միջնակարգ դպրոցի վերջին դասարանները երբևէ տեսել։ Իսկ մնացածները ծխական դպրոցներից ու վանքերից են. մինչև անգամ կան և անգրագէտներ։

Այժմ ամեն մի թերուս, դպրոցից արձակված, անընդունակ անձ գալիս-դառնում է տիրացու, ապագայում քահանայանալու յոյսով. դրանք երկար տարիներ տիրացու մնալով՝ ազդեցիկների, ոսկիների, կամ վերին ատեանի խոնարհութեան շնորհիւ քահանայանում են և ցաւ դառնում գիւղի, թէկուզ և քաղաքի որևէ համայնքի գլխին։

Իսկ մի մոռանաք, որ Աբովեանը, Նալբանդեանը և այլն մի-մի տիրացուներ էին, որոնց ժամանակ տիրացութիւնն էլ տիտղոս էր համարվում։

Իսկ ինչպէս, ինչ միջոցներով պէտք է ինքը ծխական ժողովը հոգս քաշէ իր եկեղեցում պաշտօնավարող տիրացուի մասին։ Նա պիտի ընտրէ նրան, ինչպէս ընտրում է եկեղեցու միւս պաշտօնեաներին։ Նրա արձակումը կամ կեանքի պայմանները այսպէս կամ այնպէս փոխելը կախված չը պիտի լինի քահանայից և երէցփոխի քմահաճոյքներից. և պիտի տան նրան բաւարար միջոց, որպէսզի կրթված տիրացուն իր դիրքը պահելով չընկճվի ու չը նուաստանայ...

Ծխական ժողովի իրաւունքն է ընտրել իր եկեղեցու բոլոր պաշտօնեաներին, և այդ մինչև անգամ նախատեսված է «ծխ. կանոնների» 5-րդ կէտում։

Ընտրութեամբ պաշտօնավարող տիրացուները, իբրև ապագայ քահանայացուներ, կը վարժվեն և կընտելանան եկեղեցական և հոգևորական կեանքին։ Նրանք, որոնք կը ցանկանան առաջ գալ այդ ասպարէզում, կը քահանայանան և կը լինեն անշուշտ ժողովրդի ցանկալին. իսկ նրանք, որոնք չեն ցանկանայ կամ չեն կարող տանել հոգևորական կեանքը, այն ժամանակ շատ հեշտ կերպով կարող կը լինեն յետ դառնալ իրանց նպատակից և դուրս գալով եկեղեցուց՝ կեանքում այլ ասպարէզ կը գտնեն իրանց համար։

Այն ժամանակ միանգամայն տեղի չի ունենայ այն տխուր երևոյթը, որ մենք տեսնում ենք այսօր քահանայ, սարկաւագ, վարդապետ, փարաջաւոր, վեղարաւոր և միրուքաւոր, վաղը անփարաջա, ցիլինդրով, կօկարդաւոր սրածայր միրուքով կամ բոլորովին ածիլված երեսով, մի խայտառակ դրութիւն ու իրողութիւն։

Լաւ պայմանները կը ծնեն, կը սնուցնեն եւ կը զարգացնեն լաւ հոգևորականութիւն, իսկ վատ պայմանները կը տան այն, ինչ որ տեսնում ենք ներկայումս։

Կարապետ Ղազարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Տանուտէրի ընտրութիւն եւ վատ եղանակներ

Ծօճկան (Բորչ. գաւ.), 22 ապրիլի

Տեղացիներին վաղուց զբաղեցնում էր տանուտէրի ընտրութեան հարցը, որի մասին օր ու գիշեր խօսում էին։ Բայց ընտրութեան յետաձգման պատճառը նոր հաշտարար միջնորդի ընտրվելն էր։

Տանուտէրի ընտրութեան ձգձգվող հարցը վերջնականապէս լուծվեց նրանով, որ այս օրերս տեղս ժամանեց մեր շրջանի I մասի հաշտարար-միջնորդը պրիստաւի հետ միասին՝ նոր տանուտէրի ընտրութիւն կատարելու նպատակով։

Այս անգամ տանուտէրի ընտրութիւնը մեզանում շատ աղմկալի էր, քանի որ այդ պաշտօնը ստանձնելու ցանկութիւն ունեցողների թիւը շատ էր, և ամեն մէկը աշխատում էր իր թեկնածութիւնը առաջ տանել։ Ժողովականների մեծամասնութեան բուռն ցանկութեամբ նոր տանուտէրի պաշտօնում ընտրվեց Գիւլլուբաղու բնակիչ (Ծօճկանի հասարակութիւն) Միսակ Զաքարեանը, որը այդ նոյն պաշտօնը վարել է էլի երեք տարի ևս։ Ժողովուրդը այս ընտրութեան մէջ ևս չարաչար սխալվեց, որովհետև ասած է՝ «չէթարից պըծանք, ընկանք վաստթարի ձեռքը»։ Նորընտիր Զաքարեանը եթէ իր արժէներով նախկին տանուտէր Գալստեանից չանցնէ, պակաս էլ չի մնայ։

Մեզանում գարնանային եղանակ էր. Սար ու ձոր կանաչել էին։ Ցանված արտերը բաւականաչափ բարձրացել էին և յոյս կար, որ այս տարի գոնէ երկրագործ դասակարգը իր աշխատանքի պտուղներից կը ստանայ առատ վարձատրութիւն, առատ բերք. մրգատու ծառերը ծաղկունքով զարդարվել էին. ընտանի անասունները գոմերից դուրս եկել և կանաչով էին կշտանում։ Բայց եղանակների յանկարծակի փոխվելը, վերջին ցուրտը, ձիւնը և անձրևները մեր գիւղականին ձգեցին անելանելի կացութեան մէջ։ Դուրս նստած ընտանի անասուններին տեղացիք գոմերն արին։ Եղանակի այս սաստիկ փոփոխութիւնը այգիների ծաղկած ծառերի և դաշտային ցանքսերի վրայ կը թողնէ իր որոշ վատ ազդեցութիւնը։

Կայծօն Շքեղեան

—

Դօդօխեանի յիշատակի յաւերժացումը

Սիմֆէրօպօլ, 16 ապրիլի

«Մշակի» № 69-ում կարդացի Ց. Սպէնդիարի զգայուն ու սիրուն յօդուածը, որը նուիրված է «Մինեռնակի» անմահ հեղինակի՝ Գէորգ Դօդօխեանի յիշատակին։

Ց. Սպէնդիարը իր յօդուածի մէջ շատ իրաւացիօրէն ասում է. «Զարմանալի է այն ժողովուրդը, որը չը գիտէ գնահատել և յարգել իր գործիչների յիշատակը։ Ուրեմն հայերի ազգային արժանապատուութեան դէմ մի կսկծալի փաստ կը լինէր, եթէ Դօդօխեանի անունը նրանց մէջ այդպէս շուտով մոռացվէր...»։

Այս տողերը կարդալիս յիշեցի թէ՝ ինչպէս «Մինեռնակի» անմահ հեղինակը մի յետ ընկած փողոցում, մի փոքրիկ տնակի մէջ, առանց որևէ ազգականի ու բարեկամի փչել էր իր վերջին շունչը... Նոյնպէս շատ խղճալի էր և նրա թաղումը, այն մեծ մարդու թաղումը, որը այնքան սերունդներ կրթել ու ազնուացրել է, որոնց սովորեցրել է սիրել բարին, գեղեցիկն ու ճշմարիտը. այն մարդու, որը տեղիս հայ կեանքի մէջ ահագին դեր է խաղացել իր անշահ, ճշմարտասէր ու ազնիւ բնաւորութեամբ։

Այժմ, ինչպէս լսեցինք, Ց. Սպէնդիարի յօդուածը արձագանք է գտել «Մինեռնակի» հայրենակիցների սրտում, և Գ. Սպէնդիարեանի առաջարկութեամբ՝ շուտով ծխ. ժողովի պէտք է դրվի այն հարցը, թէ ինչպէս յաւերժացնել «Մինեռնակի» անմահ երգիչ՝ Գէորգ Դօդօխեանի յիշատակը։

Յուսանք և սպասենք, որ Սիմֆէրօպօլի հայ համայնքը իսկապէս արձագանք կը տայ իր հայրենակցի ազնիւ կոչին, որով ցոյց կը տայ, թէ դեռ բոլորովին հանգած չէ ազգային գիտակցութեան և պարտաճանաչութեան անշէջ կրակը իր մէջ...։

Շատ ցանկալի է, որ նոյնպէս վերոյիշեալ ծխ. ժողովին դրվէր, թէ ինչպէս տօնել հայկական տպագրութեան 400-ամեայ յոբելեանը, նոյնպէս և «Մշակի» 40-ամեայ յոբելեանը, որոնք իսկապէս պատիւ կը բերէին Սիմֆէրօպօլի հայ համայնքին։

Ո՛ն անդր, դէպի լոյս, դէպի իսկական կեանք. փախուստ լճացած ճահիճից...։

Սիմ. Գրիկեան

—

Շահնազար գիւղի ուսումնարանը

Շահնազար (Լոռու շրջ.), 18 ապրիլի

1877 թւից մեր գիւղում գոյութիւն ունէր ծխ. միդասեան ուսումնարան, որը կառավարվում էր Սարգիս վ. Եազըճեանի հսկողութեամբ և նիւթական միջոցներով։

1897 թւին այս ուսումնարանը փոխվեց ժողովրդական ուսումնարանի և անցաւ դիրեկցիայի իրաւասութեան տակ։ 1910 թւից ուսումնարանը դարձաւ երկդասեան։ Այժմս սովորում են հարիւրի չափ աշակերտներ երկու դասարանում երկու ուսուցչի մօտ։ Գիւղը վճարում է 300 ր. ընդհանուր ծախքերի համար, իսկ ուսուցիչների ռոճիկը վճարվում է պետական դրամարկղից 360—400 ր. ռոճիկով իւրաքանչիւրին։ Դասական աշակերտական պիտոյքները հոգում են իրանք աշակերտները, իսկ տան քրէհը (ուսումնարանի և ուսուցիչների ապրելու) տալիս է գիւղը։

1911 թւին գիւղացիք որոշեցին կառուցել երկդասեան երկյարկանի մի ուսումնարան գիւղից դուրս, «Դարի գլուխ» կոչված տեղում, որի ծախքը ըստ մակարդակի հասնում է 12,000 րուբլու, 6000 ր. պետական գանձարանից, իսկ 6000 ր. գիւղից. քար, փայտ, կիր, աւազ և այլ պէտքերը հասարակութիւնը ձրի պէտք է բերէ։ Երկու տարվայ ընթացքում շինութիւնը կաւարտվի։

Ապրիլի 12-ին հանդիսաւոր կարգով օրհնվեց հիմքը և տաս յոյն վարպետներ սպիտակ կոպածոյ քարերով սկսեցին պատերի շարել։ Պետ. Եազըճեան

—

Վատ եղանակների ազդեցութիւնը

Ջէրրայլի (Կարեագ. գ.), 25 ապրիլի

Ապրիլի 10—11-ին եկած ձիւնը հիւսիսային քամու հետ բերեց մեծ վնասներ բոլոր պտղատու ծառերին, որոնց դուրս եկած տերևներն ու բացված ծաղիկները ձիւնից յետոյ թափվեցին. գիւղացիների միակ յոյսը դրված է ցանքսերի վրայ, որոնք դեռ այժմս վնասվելու նշաններ չեն ցոյց տալիս։

Անելանելի է այն գիւղացիների դրութիւնը, որոնց շերամի սերմը ժամանակից շուտ է դուրս եկել, որովհետև թթենիների տերևները չորացան ձիւնից յետոյ։

և որպէսզի դուրս գան նոր տերևներ, հարկաւոր է առնուազը 2 շաբաթ։ Խաղողի այգիները նոյնպէս փչացել են, իսկ միւս ցանքերի պտուղները կը լինեն հիւանդոտ։

Մեր գաւառի հայերը բնակված լինելով աւելի սար տեղերում՝ աւելի մեծ վնաս կրեցին, որովհետև Արաքսի հովիտը ազատ մնաց ձիւնից, իսկ տեղաց անձրև աւելի քան հարկաւոր էր։

Մորեխի դէմ կռւելու համար մեր գաւառը ներկայացրել է 3,000 բանուոր, և յոյս կայ, որ կարելի կը լինի մորեխը նուազեցնել, որովհետև ադմինիստրացիան և ժողովուրդը գործում են մեծ եռանդով։

Ավ. Տէր Յարութիւնեան

ՄԵՐ ԳԻՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՑ

III

Մաղրասա (Շամախու գ.), 13 ապր.

Փետրվարի սկզբին առիթ ունեցանք ներս մտնելու մեր գիւղի մանր վարկի հիմնարկութիւնը։ Այդ օրը, եթէ չենք սխալվում, մեծ մասամբ դրամ տրվում էր հարևան Քարքանջ և Դարա-Քարքանջ գիւղերի բնակիչներին։ Յաջորդ նիստի համար բարձրաձայն յայտարարվեց, որ դրամ պէտք է բաժանվի Քեալախանի գիւղի բնակիչներին։ Իսկ դրանից առաջ ամբողջ 4 օր դրամ են ստացել մեր գիւղացիները։ Մանր վարկը այդ օր, երբ մենք ևս ներկայ էինք, դրամ կարողացաւ հասցնել միայն 55 հոգու, իսկ մօտ 15—20 հոգու համար էլ ժամանակ նշանակեց յաջորդ կիրակի օրվայ նիստը։

Մեր մանր վարկը պետական բանկում ունի 10,000 ռուբ. կրեդիտ, որից արդէն 7000-ը բերվել և ընդամենը հինգ նուագում բաժանվել է խնդրատու կարիքաւորներին։ Մնացած 3000-ը համարեա թէ մի կաթիլ ջուր է այն համատարած կարիքի վերաբերմամբ, որը շատ շուտով պէտք է բարձրացնի իր գլուխը։ Դա այգու հետ կապված աշխատանքի վերսկսելն է։ Աստուծուն է միայն յայտնի, թէ մեր շրջանի ամեն մի հայ գիւղացի որչափ է ծախսում իր այգու մշակութեան համար և թէ քանի լեզգիների և համշարիների անյատակ ստամոքս է նա լցնում։ Դրամի կարիքն, ուրեմն, շուտով, հէնց որ արեգակը մի փոքր ջերմացնի հողը և մարդկանց դէպի եռուն աշխատանք հրաւիրի, պէտք է շատ սուր կերպով զգացվի թէ մեր գիւղում և թէ մեր շրջանի միւս գիւղերում։

55 խնդրատուներից 50-ը իրանց խնդիրները պատճառաբանեցին հացի սպառմամբ։ Երկու գիւղ, ուրեմն, մի երկու ժամվայ ընթացքում հրապարակի վրա էին կանգնեցրել 50 սոված և հացի կարօտ ընտանիք, այն էլ ձմրան դաժան օրերին։ Ջանսալ սովի ուրուականի առաջ կանգնած 50 այդ թշուառ մարդկանց թախանձանքին՝ չէր կարելի, և մանր վարկի վարչութիւնը աշխատում էր հնար . եղածին չափ օգնութեան ձեռք մեկնել նրանց։ Նըման ձևով են պատճառաբանել իրանց կարիքը նոյնպէս և մեր գիւղացիներից շատերը։

Բայց ինչո՞ւ են գիւղացիք մնում քաղցած, այն գիւղացիք, որոնք և՛ ցանում են, և՛ հնձում, մինչդեռ երկնքի թռչունները... որոնք ո՛չ ցանում են և ո՛չ էլ հնձում... Պատասխանը պարզ է. հողի սակաւութիւն և և նրա մշակութեան պապենական-նահապետական սիստեմ։ Հողի սակաւութեան դէմ գոնէ մեր միջավայրում մաքառել կարելի չէ։ Կանգնեցնել ազգաբնակութեան աճման թափը՝ մեր գործը չէ, մինչդեռ միւս կողմից հողի քանակութիւնը մնում է անփոփոխ և այդպէս էլ մնալու է դեռ երկար ժամանակ։ Մնում է, որ եղած հողը մշակվի խելացի կերպով և գիտութեան ժամանակակից հրահանգների համաձայն, որպէսզի դառնայ արդիւնաշատ և գոհացնի իր վրա դրված յոյսը։ Բայց դա մեր կողմի գիւղացիների համար չէ ասված, որոնք իրանց պապենական ճանապարհը պինդ բռնած՝ առաջ են գնում առանց գիտակցելու, թէ ուր... Բարի օրինակն էլ, փառք Աստուծոյ, մեր այս աշխարհում վարակիչ չէ, որ ներս մտնի մարդկանց ջղերի մէջ և թափահարի նրանց ու սթափեցնի... Եւ մինչ ռուս գիւղացիները նոր սիստեմի գութանները և երկրագործական այլ գործիքները ձեռքներին ոյժ են տալիս հողագործութեանը, մերոնք պնդը Ջրհեղեղեան բահով զօռ են տալիս այգեգործութեան։ Եւ արդիւնքը լինում է այն, որ ռուս գիւղացիները գնալով հարստանում են, իսկ մերոնք՝ աղքատանում և հացի համար դուռը դուռ ընկնում։ Տարբերութիւնը իրանց և մեր մէջ ռուս գիւղացիք լիովին հասկանում են և միշտ, երբ խօսք է լինում աշխատանքի եղանակի մասին, նրանք մեզ՝ հայերիս հեգնում են այսպէս. «Դուք աշխատում էք դէպի յետ գնալով, մենք աշխատում ենք առաջ շարժվելով. ձեր վաստակը լինում է քիչ, մերը՝ շատ»։ Յայտնի է, որ հայ գիւղացիները իրանց այգիները բահում են դէպի յետ ընկրկելով, իսկ ռուս գիւղացիները իրանց արտերը վարում են դէպի առաջ շարժվելով։ Եւ ռուս մուժիկները իրանց հեգնական խօսքերով ռամկօրէն շօշափում են յետամնացութեան և առաջադիմութեան գաղափարը։

Բայց և այնպէս անհրաժեշտ է մեր շրջանի թշուառ հայ գիւղացիներին օգնութեան ձեռք երկարացնել և թոյլ չը տալ, որ նրանք տառապեն անխիղճ վաշխառուների գիւտօրէն սարքած որոգայթների մէջ։ Կարիքը մեր գիւղերում այնչափ սուր է և ահռելի, որ 10,000 ռուբլի կրեդիտը երբէք չէ կարող նրան հովութիւն տալ, ինչպէս որ մի մատնոց ջուրը չէ կարող թրջել ծարաւից չորացած կոկորդը։ Մանր վարկի վարչութիւնը դիմել է ուր հարկն է՝ 10,000-ը աւելացնելու նպատակով, սակայն մերժումն է ստացել այն մէկ հատիկ պատճառաբանութեամբ, թէ մեր մանր վարկում բացակայում է աւանդը (վկլադ)։ Եթէ մեր ունևորները իրանց դրամները թաքցնելու և կամ զանազան միջոցներով շահեցնելու փոխարէն աւանդ տան նրան, այն ժամանակ նրա կրեդիտը հաւանական է, որ փոխանակ 10,000-ի՝ դառնայ 20,000, որ ինքն ըստ ինքեան աչքի ընկնող մի գումար է մեր կարիքաւոր միջավայրի համար։ Բայց մինչև որ մեր ունևորները այդ հասկանան, քօշ ու քարվանը կանցնեն...

Մնում է, որ մենք դարձեալ դիմումն անենք մեր գիւղի ինտելիգենտ երիտասարդներին, նրանց՝ որոնք մեր նախորդ դիմումը (պարբերական հրատարակութիւնների համար) թողել են անհետևանք։ Սիրելի ընկերներ և յարգելի բարեկամներ. մեր այս մի քանի խօսքերով երբէք յաւակնութիւն չունենք մեր միջավայրի կարիքը ձեզ ներկայացնելու իր բոլոր մասերով և ամբողջութեամբ. այդ կէտում թերևս դուք մեզանից աւելին գիտէք։ Բայց, կարծում ենք, հէնց այդքանն էլ բաւական է, որ մենք կպած լինենք ձեր խղճի զգայուն թելերին և ձեզ աշխատանքի հրաւիրենք ձեր կարիքոտ հայրենիքը։ Դուք մեծ մասամբ ապրում էք Բագուի նման հարուստ քաղաքում, լիութեան և առատութեան մէջ, բայց մոռանում էք, որ ձեր հայրենիքում քաղցածութեան ուրկանի մէջ թրթռացող ընտանիքներ կան, որոնց պարտաւոր էք ազատել։ Դուք ձեր տրամադրութեան տակ ունէք «Մաղրասայի գիւղատնտեսական փոխադարձ օգնութեան» մի ընկերութիւն իր՝ մօտ 4000 ր. դրամագլխով։ Հաւատում ենք, ընկերներ և բարեկամներ, որ դուք լիովին ըմբռնում էք «փոխադարձ օգնութիւն» զոյգ խօսքերի իսկական իմաստը։ Եթէ այո, ապա դուք ձեր տրամադրութեան տակ եղած 4000 ռուբ. փոխանակ Բագուի որևէ մի բանկային հաստատութեան մէջ քնեցնելու չընչին տոկոսով, կարող էք ամենայն վստահութեամբ շահեցնել ձեր հայրենի գիւղի մանր վարկի հիմնարկութեան մէջ, որտեղից դուք ամեն րոպէ կարող էք մաս առ մաս յետ վերցնել ձեր դրամը և գործադրել ձեր անմիջական նպատակների իրագործման վրա։ Վնաս բոլորովին չէք ունենայ, իսկ օգուտ՝ անչափ։ Եւ ձեզ հետ միասին կօգտվի նաև ձեր հայրենի գիւղը։ Թոյլ տուէք, խնդրում ենք, որ մատնանշենք բոլոր այն օգուտները, որոնք կարող են ստացվել ձեր դրամի՝ Բագուից մեր գիւղ փոխադրվելովը։

Ամենից առաջ դուք փոխանակ 3—4 $^{0}/_{0}$-ի, կը ստանաք 5—8 $^{0}/_{0}$, որ ինքնըստինքեան մեծ օգուտ է ընկերութեան համար։

Երկրորդ՝ մեր մանր վարկը իր նախահաշիւներում՝ աւանդի սիւնակում 4000 ր. խոշոր գումար ցոյց տալով՝ խոշոր գումարի էլ կրեդիտ կարող է ունենալ պետական բանկում, որ խիստ ցանկալի է։

Երրորդ՝ 4000 ռուբլին փոխանակ շրջանառութեան մէջ լինելու օտար միջավայրում, կը գործի մեր սեփական միջավայրում, որի օգտակարութիւնը չենք կարծում, որ դուք էլ ժխտէք։

Եւ չորրորդ՝ յիշեալ գումարի շրջանառութիւնից մեծապէս կօգտվի նոյնպէս և մեր մանր վարկը, որ արդէն սկսել է դեֆիցիտներ ցոյց տալ։ Արդ՝ մենք չենք կարծում, որ դուք կը բացասէք և կամ կը զլանաք ձեր հայրենիքին այդ չորս տեսակ օգուտները, քանի որ ձեր նպատակն էլ, ընկերութիւն կազմելով, ձեր հայրենիքի կարիքներին օգտակար կերպով ծառայելն է։

Մենք և մեզ հետ միասին մեր համագիւղացիները հաւատում ենք, որ դուք ուշադրութեան կառնէք մեր առաջարկութիւնը, լըջօրէն կը խորհրդակցէք միմեանց հետ և խելացի եզրակացութեան կը յանգէք։

Այսպէս ուրեմն՝ յուսով սպասում ենք ձեր աջող կարգադրութեան և համոզված ենք, որ դուք թոյլ չէք տայ, որպէս զի մեր յոյսը մեզ ամաչեցնի...

Հայրենակից

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նոր-Բայազէտ, 27 ապրիլի

Երևանի նահանգական դատարանի քրէական բաժնում մի քանի օր առաջ քննվեց տեղացի Միսակ Վանեցեանի սպանութեան գործը, որպիսի սպանութիւնը կատարել էին նրա հարևան՝ եղբայրներ Ռուբէն և Յովհաննէս Ղարաբաղցեանները։ Որքան յիշում են «Մշակի» ընթերցողները, ես այդ մասին գրել եմ անցեալ տարի «Մշակի» № 166-ում, այնպէս որ երկար խօսելու այդ սպանութեան մասին կարիք չը կայ։ Միայն այն կասեմ, որ եղբարք Ղարաբաղցեանները մի քանի խուրձ խոտի համար զուր տեղը սպանեցին իրանց բարեկամ (խնամի) Միսակին՝ թողնելով անտէր նրա որբերին և այրի կնոջը։

Քննելով այդ գործը համաձայն քրէական պատժագրքի 1455-րդ յօդուածի, նահանգական դատարանը վճռեց զրկել բոլոր իրաւունքներից և դատապարտել Ռուբէն Ղարաբաղցեանցին 8 տարի տաժանակիր աշխատանքների, իսկ նրա կրտսեր եղբայր Յովհաննէսին՝ 5 տարի և 4 ամիս։ Դրանից զատ՝ դատարանը որոշեց նաև սպանված Վանեցեանի որբերի օգտին տարեկան 120 ր. օժանդակութիւն տալ Ղարաբաղցեանների կողմից, մինչև որբերի—2 երեխայ—չափահաս դառնալը։

Այսպիսով ուրեմն Ղարաբաղցեանները սպանութիւն գործելով ոչ միայն անբաղդանում են սպանվածի ընտանիքը՝ անխնամ մնալով ընտանիքի հօր հոգատարութիւնից, այլ և սպանողների ընտանիքը նոյնպէս անբաղդանում է՝ մնալով դառն չքաւորութեան մէջ, թող թէ նա, այդ սպանողների ընտանիքը, պէտք է նպաստէ սպանվածի որբերին տարիների ընթացքում...

Դատարանի բաժինը, որի նախագահն էր Մայգուր, մեզանում մնաց 20 օր և այդ օրերի ընթացքում քննութեան ենթարկեց 57 սպանութեան, գողութեան, անպատւութեան, առևանգման և այլ նման քրէական գործեր և յանցագործութիւններ, որոնց քննութիւնը վերջացաւ ամսիս 21-ին։ Ապա դատարանի բաժինը ուղևորվեց իր պաշտօնատեղին՝ Երևան։

Ֆարս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մօտ օրերս տեղի կունենայ մինիստրական խորհրդի նիստը ներկայութեամբ Կովկասի Փոխարքայի, Թիֆլիսում համալսարան բանալու նկատմամբ խորհրդակցելու համար։

◆ Պետական չորրորդ Դումայի ընտրութիւնների առիթով Բագուի քաղաքային վարչութիւնը հրատարակել է առանձին գրքոյկ, որի մէջ մտնում են ընտրական կանոնները և առհասարակ այն բոլոր բացատրութիւնները, որոնցով պիտի ղեկավարվել ընտրութիւնների ժամանակ։ Շատ լաւ կը լինէր, եթէ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնն ևս նման մի գրքոյկ հրատարակէր, որով դիւրութիւն կընծայվի քաղաքիս ընտրողներին ընտրութեան ժամանակ նրանով ղեկավարվելու։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան նիստերը տեղի կունենան երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ցերեկվայ ժամը 1½-ից յետոյ, իսկ երեքշաբթի օրերը երեկոյեան ժամը 8-ից։

◆ Բերլինի օպերային դերասանուհի Լուլու Կեսսլէրը ապրիլի 30-ին ժամանեց Թիֆլիս։ Նրա տաղանդի յարգողները դիմաւորեցին նրան Նաւթլուղ և Թիֆլիս կայարաններում, մատուցելով բազմաթիւ ծաղկեփնջեր։ Դերասանուհու առաջին համերգը տեղի կունենայ մայիսի 3-ին, երաժշտական դպրոցի դահլիճում։

◆ Հասարակական ակումբի կազմակերպած վերջին էկսկուրսիան տեղի ունեցաւ ապրիլի 29-ին։ Էկսկուրսանտները դիտեցին Մցխէթը և Քարսանի կոչված վայրի մօտերքում գտնվող ֆիզիկական դիտարանը։

◆ Մօտ ապագայում Կովկասի այլևայլ 136 վայրերում կը բացվեն պօստային բաժանմունքներ։

◆ Մայիսի 6-ին, կիրակի, Ժողովրդական Տանը տեղի կունենայ Ժողովրդական Համալսարանի հայերէն 6-րդ դասախօսութիւնը։ Այդ օրը ուսուցիչ Ա. Յարութիւնեանը կը դասախօսէ «Դաստիարակութիւնը իբրև սօցիօլօգիական պրօբլեմ» նիւթի մասին։

◆ Պետական բանկի կառավարչի օգնական Ն. Նիկիտինը, քննելով պետական բանկի Թիֆլիսի ճիւղը, ապրիլի 30-ին Պետերբուրգ մեկնեց։

◆ Դպրոցական շրջանային տեսուչ Լ. Լօպատինսկին պաշտօնական գործերով մեկնեց դէպի Սև-ծովի ափերը։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը որոշեց դումայի հայեցողութեանը առաջարկել վրաց ազնուականութեան գիմնազիայի չքաւոր աշակերտների համար հիմնված ձրի ճաշարանի օգտին 100 ր. տրվելիք նպաստի հարցը, որոշելով առաջարկել այդպիսի գումարը բաց թողնել 1913 թւից։

◆ Վանքի մայր եկեղեցու պատի տակով անցնում է մի փողոց դէպի նորակառոյց Մուխրանեան կամուրջը, որը ներկայումս անցուդարձ անողների համար գիշերները շատ վտանգաւոր է դառել։ Օգտվելով լուսաւորութեան բացակայութիւնից, մութ ոյժերը յարձակվում են անցնողների վրա և կողոպտում։ Այդպիսի երկու դէպք տեղի ունեցան ապրիլի 29-ին և 30-ին երեկոյեան մօտաւորապէս ժամը 10-ին։ Մէկից խլեցին 20 ր., իսկ միւսից փողերը և ժամացոյցը։ Անհրաժեշտ են այդտեղ լապտերներ դնել և ոստիկաններ կանգնեցնել։

◆ Ապրիլի 30-ին, առաւօտեան 9 ժ. 10 րոպէին, Թիֆլիսի նահանգական դատարանի աբեռնտրոլս Գաբրիէլ Խուցիևը իր ծառայատեղին գալով՝ վերարկուն հանելու ժամանակ վայր ընկաւ և յանկարծամահ եղաւ։

◆ Ապրիլի 30-ին մի սայլապան ցանկանալով իր գոմէշներին ջուր տալ՝ քշեց նրանց Կուր գետի մէջ և խորունկ տեղ ընկնելով սայլը շուռ եկաւ ու սայլապանին տակն առնելով՝ նրան խեղդեց։ Գոմէշները ազատված են։

◆ Հինգշաբթի, մայիսի 3-ին, առաւօտեան ժամը 10-ին Նախալովկայի Թատրոնում տեղի կունենայ առանձին խորհրդակցութիւն Թիֆլիսում շինարարական գործով զբաղվող արտէլ կազմակերպելուն ձեռնարկած անձանց, արտէլի կանոնադրութիւն մշակելու նպատակով։

◆ Աբարանից եկողները պատմում են, որ այնտեղ կատարեալ ձմեռ է տիրում։ Երկիրը ծածկված է մինչև մի արշին ձիւնի հաստութիւնով։ Ամսիս 22-ին կէսօրից յետոյ այնտեղ եկել է խոշոր մեծութեամբ կարկուտ, որը դուրսը գտնված ոչխարներին մասնաւոր վնաս է հասցրել։ Անասունների կերը կատարեալ բացակայում է։ Անասունները, որոնք վերադարձել են արան տեղից, նորից դառնում են իրանց տեղերը թէ ցրտի և թէ կերի բացակայութեան պատճառով։ Գիւղացիք վար ու ցանքս չեն արել և յոյս էլ չունեն թէ կարող են անել, ուստի նրանց սպառնում է գալ տարի սով։ Ներկայումս էլ հացի սաստիկ թանգութիւն է այնտեղ։ Գիւղացիների մէջ միտք է յղացել գաղթել ուրիշ յարմար տեղեր, ուր աշխատանքը վարձատրվում է։ Հարկաւոր է ընդառաջ գնալ նրանց և օգնել խեղճերին թէ խօսքով և թէ գործով։

◆ Բագուի քաղաքագլխի պաշտօնի համար առաջարկվող Ֆ. Գոլովինին ներկայացած պատգամաւորութիւնը այն տպաւորութիւնն է ստացել, որ նա կը հրաժարվի քաղաքագլխի պաշտօնը ստանձնել։

◆ Մօտ օրերս Թիֆլիսից մեկնած վրաց դրամատիկական դերասանական խումբը Փոթիում ունեցել է մեծ աջողութիւն։ Խումբը խաղացել է «Պէպօ» կոմէդիան։ Տեղական հասարակութիւնը ի պատիւ խմբի ճաշկերոյթ է կազմակերպել։

◆ Սպիտակ Ծաղկի օրը Մոսկվայում հանգանակվել է 155,000 ռուբլի գումար։ Մոսկվայի ազգաբնակութեան քանակը հաշւելով 1.615,923 մարդ, միջին թւով իւրաքանչիւր բնակչի վրա ընկնում է 9 կոպէկ։

◆ Կարսի և Կաղզւանի գաւառների մի քանի գիւղերում տարածվել է ժանտախտ կենդանիների մէջ։

◆ Գորու գաւառի Խերսի գիւղի դաշտերում երևացել են մեծ քանակութեամբ դաշտամկներ, որոնք խոշոր վնասներ են հասցնում ցանքսերին։

◆ Ղազախից, ապրիլի 27-ից, մեզ գրում են հետևեալը։ «Եղանակները Ղազախի գաւառում սաստիկ անձրևային են, սարերում ձիւն ու ցուրտ. արտերին վտանգ չէ սպառնում, բայց պտուղները կիսով չափ վնասված են երևում»։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Դպրոցական արբեցութիւնը եւ կռիւը՝ նրա դէմ.—Մոսկվայի քաղ. վարչութեան մէջ հարց է բարձրացված միջոցներ ձեռք առնելու՝ Ռուսաստանում և մանաւանդ Մոսկվայում ու Մոսկվայի նահանգում տարածված՝ դպրոցական արբեցութեան դէմ։ Ա. Ա. Կարնիլովը կարդաց վարչութեան մէջ մի զեկուցում այդ առիթով։ Զեկուցողը ապացուցում է, որ ալկօհօլիզմի հակում ունեցող մեծ աշակերտներից 90 $^{0}/_{0}$-ից աւելին ոգելից ըմպելիքին սովոր են եղել նոյնիսկ դպրոցի նստարանին նըստած։ Մարկովի ու դօկտոր Կարօվինի արած անկէտայից Մոսկվայի նահանգում երևում է, որ 18,134 աշակերտ սկսել են ընտելանալ ալկօհօլին 8—13 տարեկան հասակը՝ թւով 12,152, այսինքն 60 $^{0}/_{0}$, իսկ 10,404 օրիորդից՝ 4,733, այսինքն՝ 45 $^{0}/_{0}$։

Իբրև գործնական միջոցներ այս ախտի դէմ կռւելու համար՝ անհրաժեշտ է համարվում տանել աշակերտներին տարին մի անգամ հակաալկօհօլական թանգարանը, հիմնել հակաալկօհօլական շարժական գրադարաններ և այլն։ Այլև խորհուրդը անհրաժեշտ է համարում մտցնել միջնակարգ դպրոցներում և ուսուցչական ինստիտուտներում ալկօհօլի վնասակարութեան մասին մասնագիտական առարկայ։ Այս որոշումները իրագործելու համար ենթադրվում է գործ դնել 41,000 ր.։

◆ Ա. Վ. Բուրիշկինի առողջութիւնը.—Մոսկվայում գտնվող Բերլինի պրօֆէսօր-վիրաբոյժ Ֆ. Կրաուզէն այս օրերս անդամահատութիւն կատարեց՝ վաղուց լուրջ հիւանդ Բուրիշկինի վրա։ Անդամահատութիւնից դեռ մի քանի օր առաջ Կրաուզէն բաց արեց հիւանդի գանգը, իսկ անդամահատութիւնը արեց այն ժամանակ, երբ հիւանդի ուղեղը ընտելացել էր մթնոլորտի ճնշմանը։ Վիրաբուժութիւնը կատարվեց հիանալի։ Հիւանդն ունեցել է ուղեղային կիստա։ Պրօֆ. Կրաուզէն ասում է, թէ իր կեանքում արել է 400 օպերացիա և միայն այս երկրորդ անգամն է, որ գործ է ունենում ուղեղի այս տեսակ հիւանդութեան հետ։ Օպերացիայի ժամանակ ներկայ էին Մոսկվայի նեվրօպատօլօգներից ու վիրաբոյժներից 9-ը՝ աչքի ընկնողներ։ Կրաուզէն ասում է, որ դրանք էին, որ ճշգրութեամբ ցոյց տուին իրան՝ հիւանդի ուղեղի մէջ եղած կիստան։ Օպերացիայից յետոյ Բուրիշկինը միանգամից թեթևութիւն զգաց։ Սակայն հետևեալ օրը մեռաւ։

◆ Հոգեկան հիւանդներ.—Մոսկվայի նահանգում ներկայումս կան 5639 հոգեկան հիւանդ, մինչդեռ 1900-ին նրանց թիւը էր 3672։ Դրանցից 420-ը անպատճառ պէտք է տեղաւորվեն հիւանդանոցներում։ 1900-ին նահանգում կային 305 հոգեկան հիւանդ, որոնք կապված էին թոկերով, և 75 հիւանդ՝ շղթայակապ։ Իսկ նոր արված ժողովրդագրութիւնից երևաց, որ չէ պատահել անգամ մի՛ դէպք, որ հիւանդին շղթայակապ արած լինեն. միայն գտնվեց մէկը, որ թոկով էր կապված։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Словарь „Правильное удареніе“. 3500 затруднительныхъ словъ. Сост. М. Агаянъ. Цѣна 5 к., Тифлисъ, 1911 г.

Պատահմամբ մեր ձեռքն ընկաւ վերոյիշեալ խորագրով մի վտիտ ու փոքրիկ գրքոյկ, որին ծանօթանալուց յետոյ անչափ զարմացանք կազմողի՝ պ-ն Մ. Աղայեանի յանդգնութեան։ Այդ պարոնը ռուսական գրական-գիտական ասպարէզն է հանդէս գալիս իր այդ ողորմելի գրքոյկով ուսուցանելու համար, թէ ինչպէս պէտք է կանոնաւոր շեշտել ռուսական բառերը, չունենալով մինչև իսկ տարրական լեզուագիտական պատրաստականութիւն։

Առաւել մեծ եղաւ մեր զարմանքը, երբ կարդացինք «Հորիզոնի» 79-դ համարում Ման-ի գրախօսականը, որում մի շարք գովեստներ են շռայլված այդ բառարանը կազմողի հասցէին։

Գրքոյկը բաղկացած է 69 երեսից և վերջում ունի վրիպակների ցանկ։ Ուրեմն այդ բառարանից օգտվողը պէտք է այնպէս կարծէ, թէ գրքոյկը կազմված է խնամքով («Հորիզոն») և այլ սխալներ ու վրիպակներ չեն լինելու մէջը, մինչդեռ բառարանում գտնում էք բացի ցոյց տրված վրիպակներից բազմաթիւ այլ սխալներ։

Բառերի ընտրութիւնը կատարված է անսիստեմ և անհետևողական. շատ կարևոր և գործածութեան մէջ սխալ կերպով շեշտվող բառեր չեն բերված, օրինակ՝ духовни́къ, зеленóй (áя), зеленщи́къ, истопни́къ, озорни́къ, серéбряный, торцевóй, каломéль, ужли́ և այլն։ Մինչդեռ շատ քիչ գործածվող և շեշտադրութեան կողմից առանձին դժուարութիւն չը ներկայացնող բառեր տեղ են գտել բառարանում, օրինակ՝ бицепсъ, всамдѣлишній, ирмосъ և այլն։

Շատ բառեր ցոյց են տրված սխալ շեշտադրութեամբ. պէտք է լինեն՝ аховóй, басовóй, бахромá, սխալ է вáлить; глашáтай, ոչ гóрбы; ուղղում ենք, грóмоздкій, деби́торъ, деверья́, дребедéнь, жи́жа, зи́ждется և ոչ зижди́тся; սխալ է клáкеръ; ճիշդ ձեւը՝ лубóчный, мая́чный, неизглади́мо, похи́тить; шелкá յոգնակի ուղղական է և ոչ եզակի սեռական և այլն և այլն։

Շատ բառեր, որոնք շեշտվում են երկպէս, ցոյց են տրված մի տեսակ շեշտադրութեամբ. áгéнтъ, анерóйдъ, астронóмъ, А́страхáнь, бáсá (սեռ. հոլով) безъ-ýмолку, библíóграфъ, блéю́тъ, брóня́, бултыхнýть, бутáфóрскій, громáди́лка, гряды́, дати́ровáніе, дáтчáнинъ, дóя́тъ, дóминó, заповѣ́дный (óй), зи́морóдокъ, знáхáрь, зóлý (հայց. հոլով), зóря́, кáбы́, казáки́, кази́нó, кобýрá, кóкóнъ, нéдýгъ, óбщи́на, ограничéніе, плýтá, съ плýтóмъ (սեռ. և այլ հոլ.), не поклáдáя, ревóльвéръ, тóждéствó և այլն։

Անհրաժեշտօրէն պէտք էր մէջ բերել շատ բառերի այլ ձևերն ևս տարբեր շեշտադրութեան, վերջաւորութեան և կամ իմաստի տեսակէտից. օրինակ՝ всенóщный (óй), зазнóбъ, кобýръ, лопýхъ, мезани́нъ, мокротá, падёжъ, понýкать, просѣ́къ, цѣли́ть և այլն և այլն։

Այսպիսով ուրեմն բառարանի վերոյիշեալ սխալներն ու թերութիւնները իրաւունք են տալիս ասելու, որ այդ գործը Մ. Աղայեանին ոչ թէ աջողվել է կատարելապէս («Հորիզոն» № 79), այլ մինչև իսկ ոչ էլ մօտաւորապէս է նրան աջողվել։ Որ ոչ թէ «ամեն մի հայ ուսանողի պարտականութիւնն է ձեռքի տակ ունենալ այս գրքոյկը» («Հորիզոն» № 79), այլ ամեն մի ուսանողի պարտականութիւնն է՝ ամեն կերպ խուսափել նրա գործածութիւնից, որպէսզի ազատ լինեն լեզուական այլևայլ տարակուսանքներից և շփոթութիւններից։

Ա. Նազարէթեան

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Թաւրիզ (Պարսկ.), 19 ապրիլի

Թաւրիզի դեկտեմբերեան արիւնալի դէպքերից յետոյ երկու թաղերի թատերասրահներում փոխ առ փոխ տրվում են ներկայացումներ և երեկոյթներ ի նպաստ նոյն թաղերի ծխական ուսումնարանների։

Ամսիս 14-ին Բերդաթաղի Արամեան ուսումնարանի թատերասրահում նոյն ուսումնարանի ուսուցչական խմբի և մի քանի սիրողների մասնակցութեամբ ներկայացվեց հռչակաւոր Դոստոևսկիի համանուն վէպից կազմած «Ոճիր և պատիժ» 5 գործ. և մի վերջաբանով դրաման, որ թարգմանել և բեմին յարմարեցրել է ուսուցիչներից Գրիգոր Աղաջանեանը։

Որչափ յայտնի է մեզ՝ աշխարհահռչակ հեղինակի վէպից կազմած դրաման զուրկ է բեմական յարմարութիւն ունենալուց, և այդ պատճառով ևս վերջին տարիներում կազմված ռեպերտուարներից դուրս է ձգված։ Թաւրիզի Ղալա թաղի ուսումնարանների ուսուցչ. խումբը՝ անպայման յիշեալ դրաման ներկայացնելու մարմաջից բռնված՝ ձեռնարկել էր թարգմանել տալ և բեմին յարմարեցնել, որ այնչափ էլ աջող չէր

Նրա տաղտկացուցիչ մենօլոգների պատճառով, թէպէտ դերակատարները, կարելի է ասել, իրանց բաւարար խաղերով մի կերպ տարան ծանր խաչը, որ տևեց մինչև գիշերվայ ժամը 3-ը։ Ինչ կը կորցնենք, եթէ մեր ազնիւ սիրողները Թաւրիզի բեմի համար ընտրեն աւելի հեշտ և նպատակայարմար պիէսներ։

Թատերասրահը կիսով չափ լի էր։ Հրաւիրված էին Թուրք պաշտօնականներ և մեծամեծներ։ Կար վիճակախաղ, նուագում էր պարսից զինուորական երաժշտախումբը։ Զուտ արդիւնքը 200 Թումանից աւելի է, չը հաշւած նահանգապետից և այլ պաշտօնեաներից ստացվելիք տոմսակի գները։

Ներկայացումը ի նպաստ Արամեան ուսումնարանի էր։ Հայկազուն

Ասխաբադ, 19 ապրիլի

Աբէլեան-Սեւումեան դերասանական խումբը Թուրքեստանի կողմից նոր էր վերադարձել Ասխաբադ։ Հասարակութեան խնդրանօք խումբը մնաց մի քանի ներկայացումներ տալու։

Ամսիս 14-ին խումբը ներկայացրեց տեղիս վելօսիպեդիստների ակումբում «Պէպօն»։ Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր հասարակութեամբ։ Նախ քան վարագոյրը բարձրանալը՝ դերասան Աբէլեանը բեմ բարձրացաւ և հասարակութեանը ծանօթացրեց Գ. Սունդուկեանի կենսագրութեան հետ։ Հասարակութիւնը յարգելով հանգուցեալի յիշատակը՝ ոտքի կանգնեց։

Խաղը սահուն անցաւ։

Միք. Գանջեցեան

Կրասնովոդսկ, 24 ապրիլի

Աբէլեան-Սեւումեան դրամ. դերասանական խումբը մօտ 2 ամիս է, ինչ շրջագայում էր Անդրկասպեան երկրում տալով մի շարք ներկայացումներ։

Խումբն իր շրջագայութեան ընթացքում ունեցել է աջողութիւն թէ նիւթապէս և թէ բարոյապէս։

Վերջացնելով տուրնէն և վերադառնալով այստեղ, խումբը ամսիս 17-ին տուեց մի ներկայացում։ Ներկայացրին Գ. Սունդուկեանի յայտնի «Պէպօն»։

Բեմի վրա դրված էր հանգուցեալ դրամատուրգի մեծադիր պատկերը թարմ ծաղիկներով շրջապատված։

Նախ քան ներկայացումն սկսվելը՝ դերասան Աբէլեանը բեմ ելնելով՝ համառօտ կերպով բնորոշեց հանգուցեալի տաղանդը և նրա կատարած դերը։

Ապա սկսվեց ներկայացումը, որ անցաւ սահուն և մեծ բաւականութիւն պատճառեց հանդիսականներին։

Իսկ կիրակի, ամսիս 22-ին, երեկոյեան, խումբը իր հրաժեշտի ներկայացմանը դրեց «Թագաւորը», դրամա 3 գործ., Ս. Իւշկեվիչի, թարգմ. Տէր-Կարապետեանի։

Խաղը նոյնպէս անցաւ աջող։ Հասարակութիւնը բուռն ու երկարատև ծափերով վարձատրեց դերասաններին և զոհ տրամադրութեան տակ հեռացաւ թատրոնից։

Խումբը այստեղից կը գնայ Թիֆլիս։

Խանումեայ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 1 մայիսի

Մենք, երկու զէյթունցիներս, Խաչէր Սինկիրեանս և Փանոս Սէթեանս, 10 օրից ի վեր գտնվում ենք Թիֆլիսում, և չը նայած որ քանիցս դիմում ենք առ Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդին մեզ նիւթական օգնութիւն ցոյց տալու և մեզ ճանապարհածախս տալու Թիւրքահայերին յատկացված գումարներից, բայց և այնպէս՝ այս տասն օրերի ընթացքում մեզ տանել-բերելով ոչ մի օգնութիւն չը հասցրին։

Արդ, այս խնդիրը հրապարակ հանելով, հարց ենք տալիս յարգարժան խորհրդին, թէ Թիւրքահայերին յատկացված գումարներից մեզանից աւելի էլ ո՞ր նեղեալ գաղթականի վրա պիտի գործադրեն, երբ Թիֆլիսից Թիւրքիա անցնելու համար մեզ առաջարկվում է միայն... 5 րուբլի։

Չը գիտենք, ռուսահայ եղբայրներ, սա ծաղր է թէ կատակերգութիւն։

Միթէ մեծանուն Կ. Հ. Բ. Ը. խորհրդին արժան է այսպիսի կատակներով զբաղվել և մեզ նման թշուառներին յատկացված գումարները... ամուր պահել։

Խաչէր Սինկիրեան
Փանոս Սէթեան

Ծանօթ. խմբ.—Տպագրելով ներկայ նամակը, թողնելով պատասխանատուութիւնը գրողների վրա, մենք միայն կարող ենք վկայել, որ, արդարև, տասն օրից ի վեր զէյթունցիները շարունակ դիմում էին «Մշակի» խմբագրութեանը և խնդրում էին օգնութիւն։ Խմբագրութիւնս, չունենալով յատուկ գումարներ և մտնելով դիմողների դրութեան մէջ, մասնաւոր կերպով խնդրել է խորհրդի անդամներից մէկին (բժ. Աղաաբեանին) հոգ տանել թշուառ զէյթունցիներին՝ հայրենիք ուղարկելու։

Գանձ-Բասար, 24 ապրիլի

Կարդալով «Սուրհանդակի» № 541-ում տպված Գր. Բոլատաննեանի բաց-նամակը, սեպուհ պարտք եմ համարում մամուլի միջոցով յայտնել, որ հիմնվելիք գիւղացական-ուսուցչական ֆոնդի օգտին Գանձ-Բասարի շրջանում ես հանգանակել եմ 224 ր. 7 կ., որը երկու գումարով փոխադրել եմ Երևանի փոխ-թեմակալի անունով հանգանակութեան թղթերով հանդերձ։ Առաջին գումարը՝ 118 ր. 58 կ. յունվարի 1-ին № 2 ապահովագրով, երկրորդ գումարը՝ 105 ր. 49 կ. յունվարի 24-ին № 17։ Հաւաստի աղբիւրներից տեղեկութիւն ունեմ, որ այդ գումարը փոխ-թեմակալը արդէն ուղարկել է Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան։

Գործակալ Գանձի շրջանի՝
Ներ. ք. Տէր-Վարդանեան

Ց. Գ.—Կը խնդրէի Կ. Հ. Բ. Ընկերութեան խորհրդից տպագրել լրագրութեան մէջ նուիրատուների ցուցակը։ Նոյնը

Գանձակ, 29 ապրիլի

«Մշակի» № 89-ում տպված Գանձակից ուղարկված թղթակցութեան մէջ՝ ժամհաբեան գիւղ. դպրոցի Գանձակում հիմնվելու հարցի առիթով սպրդել է մի սխալ։

Ժողովին ներկայ էին 300-ից աւելի ծխականներ, որոնցից մի մասը չը սպասելով մինչև վերջը ցրվեց. իսկ հարցի լուծման ժամանակ ընդդէմ խօսողներ բացի մէկից չէին եղել. լուծումն էլ եղել է բաց քուէարկութեան միաձայն։ Արձանագրութեան տակ ստորագրված է 315 անուն, իսկ հակառակ՝ ոչ ոք։ Ինչպէս տեղեկացայ, հոգևոր կառավարութեան մէջ էլ ընդդէմ ոչ մի գրաւոր թուղթ չը կայ։ Այնպէս որ յօդուածում յիշված 368 և հակառակ 64 թըւերը իրականութեան չեն համապատասխանում։ Հաւանականաբար ծնունդ է թիւրիմացութեան։ Եսգէթ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Գերմանական լրագիրներից մի քանիսը սենսացիօն յօդուածներ են տպում ֆօն-Բիբերշտէյնի անակնկալ պաշտօնափոխութեան առիթով։ Լրագիրների ասելով, առաջիկայում տեղի են ունենալու լուրջ բարդութիւններ միջազգային քաղաքականութեան մէջ։ Իտալիայի և Անգլիայի միջև համաձայնութիւն է եղել, որով Իտալիան հեռանալու է եռապետեան դաշնակցութիւնից և Անգլիայի հետ բաժանելու է գերիշխանութիւն Միջերկրական ծովի վրա։ Իտալիան յօժարակամ հրաժարվեց գրաւել Դարդանէլը, ստանալով Անգլիայի համաձայնութիւնը գրաւելու Ռոդոսը, Իփսոր և Լէսբոսը։ Անգլիան պարտաւորվել է անպայման Թիւրքիային մտցնել հաշտութիւն կապելուց յետոյ մեծ պետութիւնների նոր խմբակցութեան մէջ, և Աւստրօ-Ունգարիան ու Գերմանիան այդպիսով միայնակ են առանձնացված։

✦ Ինչպէս հաղորդում են «Р. Сл.»-ին, ռուսաց արտաքին գործերի մինիստր Ս. Սազոնովը Եալտայից յանձնարարել է Կ. Պօլսում պաշտօնավարող դեսպան Մ. Գիրսին դարձնել Բ. Դրան ուշադրութիւնը նեղուցները բանալու անվերջ ձգձգման վրա։ Գիրսին յանձնարարված է տեղեկանալ, թէ որոնք են այն իրական պատճառները, որոնք խոչընդոտ են հանդիսանում Դարդանէլի բացման։ Պատուիրագրված է խորհուրդ տալ Բ. Դրան՝ անյապաղ ու եռանդով վերացնելու նեղուցների բացումը խանգարող պատճառները։

✦ Թէ իտալական և թէ ռուսական ստոյգ աղբիւրներից տեղեկացնում են, որ Իտալիան պատուիրել է իր ռազմի նաւատորմին սկսել ակտիւ գործունէութիւն Եգէյեան ծովում և Արշիպելագոսում։

✦ Պետերբուրգում ժող.-լուս. մինիստր Կասսոյի բնակարանի վրա նշանակված է ոստիկանական ուժեղ պահպանութիւն։

✦ Ի նկատի առնելով Իլիոդոր աբեղայի յուզման վարմունքը ուխտաւորներին ընդունելու ժամանակ, ռուսաց սինօդը վճռեց զրկել նրան քահանայական կոչումից՝ հանելով նրա վրայից փարաջան։

✦ Պետական Դուման Մոսկվայի հանդէսների ժամանակ կընդհատէ իր պարապմունքները։

✦ Աջակողմեան պատգամաւորները բողոք ներկայացրին Րոդզեանկոյին՝ սոց.-դեմոկրատ Պոկրովսկիի Պետական Դումայում արտասանած վերջին խիստ ճառի առիթով։ Րոդիչեվը «Ստոլիպինեան գալստուխ» խօսքի համար,—ասում են բողոքողները,—արտաքսվեց 15 նիստից, մինչդեռ Պոկրովսկին կառավարութեան ներկայացուցիչներին մունդիրներ հագած գայլեր անուանելու համար սոսկ կարգի հրաւիրվեց...»։

✦ Նորից հրատարակված է Նիժնի-Նովգորոդի արհեստաւոր Ալէքսէյ Մակսիմով Պեշկով-Գորկիի (Մակսիմ-Գորկիի) ներման մասին։

✦ Առևտրի նախկին մինիստր Տիմիրեազեվը հրաժարվել է նախագահել Լէնայի ոսկեհանքերի վարչութեան մէջ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

30 ապրիլի

ԼՈՆԴՈՆ։ Տուրգենէվի թարգմանիչ Գարնէտը մի նամակով կոչ է անում անգլիացիներին նուիրաբերել յօգուտ Ռուսաստանի անբերրիութեան զոհերի։

Համայնքների պալատում կառավարութեանը ուղղվեցին մի քանի հարցեր Մալէցկայայի գործի առիթով, որին դատապարտել է Վարշավայի նահանգական դատարանը։ Հարցապնդումը կայանում է նրանում, թէ մտադիր է արդեօք կառավարութիւնը միջոցներ ձեռք առնել, ի նկատի ունենալով, որ Մալէցկայան հանդիսանում էր անգլիահպատակ։ Ստատս-սեկրէտարի օգնական Օկլենդ յայտնեց, թէ անհնար է պատասխանել, քանի որ պակասում են մանրամասն տեղեկութիւններ դատավարութեան մասին։

ԲԵՐԼԻՆ։ Արևմտեան-Գերմանիայում ուրագանը մեծ աւերածութիւններ գործեց։ Ծառերը պոկվեցին, տանիքները տեղահան եղան։ Ալֆէլդում ժամանակաւոր ցիրկի վրայից, որի մէջ գտնվում էին 2000 հոգի, պոկվեց թիթեղեայ ծածկոցներից մինը. 20 մարդ վիրաւորվեցին։

ՄՈՍԿՎԱ։ Բացվեց կենդանաբուծութեան համառուսական ցուցահանդէսը։

ՄՈՒԿԴԵՆ։ Նահանգի անցեալ տարվայ հեղեղներից ու անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեանը երկրագործական օգնութիւն հասցնելու համար կառավարութիւնը հաստատեց հողատիրական բանկ հողաբաժինների գրաւականով փոխատուութիւնների համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կառավարիչ սենատը բացատրեց, որ քր. պատժ. 312-րդ յօդուածով նախատեսված յանցանքը, բանտարկութեան տեղերից փախչելու ժամանակ պահակախմբին դիմադրելը ենթակայ է դատական պալատների քննութեան՝ դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ։

Ենթարկվեցին տուգանքի «Запросы Жизни» և «Рѣчь»-ի խմբագիրները 300 և 350 ր.։

Դումայական ֆինանսական մասնաժողովը ընդունեց զէմստվային ու քաղաքային ֆինանսները բարելաւող օրինագծի առաջին մասը։

ԿՐԱԿՈՎ։ Լեհ նարօդովցինները կազմեցին բողոքի միտինգ Լվովում ուկրայնական համալսարան հիմնելու դէմ։

ԼՕՁ։ Րիխտերի ֆաբրիկայում հրդեհը պատճառեց 100,000 րուբլու վնաս։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ 10 զինված չարագործներ, ներս խուժելով էլեքտրաքարշի վագոնների պարկը, գանձապահից յափշտակեցին 2000-ից աւելի րուբլի, կտրելով վագոնի հեռագրաթելերը և սպառնալով ատրճանակներով 50 կոնդուկտորներին, որոնք իրանց տեղերից անգամ չը շարժվեցին։

ԿԻԵՎ։ Գրաւվեց «Двуглавый Орелъ»-ի 70 համարը Իւշչինսկիի գործի առիթով մի շարք յօդուածներ տպելու համար։

Միացեալ բանկի բաժանմունքում դրամատար Վորոնինը վատնել է մօտ 106,000 ր.։ Դրամատարը կալանաւորվեց։

ԲՐԻՒՍԷԼ։ Ուրագանը փչացրեց շինութիւններ, հեռագրաթելեր ու հեռախօսը։

ԳՕՍՏԻՆԻՆ։ Գիշերս հրդեհը ոչնչացրեց քաղաքի կենտրոնական թաղի մի մասը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Կաշգար, Ց. Փ.-ին.—Շարունակեցէք։ Ընդունում ենք։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 8 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 58 ր., Եվլախ 4 ժ. 29 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 7 ր. երեկ., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ Պօստային գնացքը № 4—12 ժ. 10 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 4 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 14 ր. առ., Եվլախ 8 ժ. 13 ր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 48 ր. ցեր., Բագու 5 ժ. 20 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 6—2 ժ. 44 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 5 ժ. 34 ր., Գանձակ 8 ժ. 42 ր. երեկ., Եվլախ 10 ժ. 39 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 21 ր. գիշ., Բագու 7 ժ. 38 ր. առ.։ Խառն գնացքը № 106 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարիքութիւն զգացվի)—4 ժ. 37 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 44 ր. առ., Գանձակ 1 ժ. 5 ր. ցեր., Եվլախ 4 ժ. 13 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 11 ժ. 45 ր. գիշ., Բագու 5 ժ. 54 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄ.—Արագ գնացքը № 11—10 ժ. 44 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 40 ր. գիշ., Բաթում 8 ժ. 58 ր. առ.։ Պօստային գնացքը № 3—10 ժ. 32 ր. ցեր., հասնում է Միխայլովօ 1 ժ. 59 ցեր., Բաթում 11 ժ. 36 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 5—7 ժ. 24 ր. եր., հասնում է Միխայլովօ 10 ժ. 38 ր. գիշ., Բաթում 7 ժ. 26 ր. առ.։ Խառն գնացքը № 107 (III կամ IV կարգի վագոններով, երբ կարիքութիւն զգացվի) 6 ժ. 18 ր. առ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 32 ր. ցեր., Բաթում 4 ժ. 31 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ պօստային գնացքը № $^{74}/_{75}$—12 ժ. 40 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 54 ր. առ., Ալէքսանդրապոլ 11 ժ. 24 ր. ցեր., Էջմիածին 4 ժամ 40 րոպ. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 7 ր. ցերեկվայ (առանց Երևան մտնելու), Նախիջևան 9 ժ. 50 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 21 ր. գիշ.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № $^{78}/_{79}$ (միայն II և III կարգի վագոններով)—7 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 2 ժ. 18 ր. գիշ., Ալէքսանդրապոլ 5 ժ. 56 ր. գիշ., Էջմիածին 11 ժ. ցեր., Ուլուխանլու 11 ժ. 26 ր., Երևան 12 ժ. 19 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար № $^{108}/_{109}$—11 ժամ 28 րոպ. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 28 ր. եր., Ալէքսանդրապոլ 11 ժ. 27 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 40 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 15 ր. առ., Երևան 7 ժ. 23 ր. առաւօտեան։

ԲՈՐԺՈՄ.—Մարդատար գնացքը № $^{7}/_{8}$—7 ժ. 58 ր. առ., հասնում է Խաշուրի 10 ժ. 43 ր., Բորժոմ 1 ժ. 39 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № $^{9}/_{10}$—3 ժ. 5 ր. ցեր., հասնում է Խաշուրի 5 ժ. 48 ր. ցեր., Բորժոմ 8 ժ. 41 ր. երեկոյեան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 1—9 ժ. 56 ր. եր.։ Պօստային գնացքը № 3—8 ժ. 56 ր. առ.։ Մարդատար գնացքը № 5—5 ժ. 51 ր. ցեր.։ Խառն գնացքը № 107—4 ժ. 56 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Արագ գնացքը № 12—9 ժ. 18 ր. առ.։ Պօստային գնացքը № 4—11 ժ. 15 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 6—1 ժ. 59 ր. ցեր.։ Խառն գնացքը № 106—3 ժ. 40 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօս. գնացքը № $^{72}/_{73}$—7 ժ. 26 ր. առ.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № $^{74}/_{75}$—8 ժ. 33 ր. եր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № $^{80}/_{81}$—12 ժ. 48 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—Մարդատար գնացքը № $^{7}/_{8}$—7 ժ. 8 ր. առ.։ Մարդատար գնացքը № $^{9}/_{10}$—9 ժ. 8 ր. երեկոյեան։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՐՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Յ. ԳՈՒՐԴԺԻՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ—1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—39

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳԲԵԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինօվսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—100

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
ԵՆՈՎՔ ԽՇՏՕԵԱՆԻ
„ԿԵԱՆՔԻ ԾԱՂՐԸ“
Գինը 35 կոպ.

Դիմել Թիֆլիս «Գիր», «Գուտտենբերգ» և «Նոր-կեանք» գրավաճառներին և հեղինակին՝ Ростовъ н./Д. Почтовая № 126. Հեղինակից գումարով գնողները զեղչով են ստանում և ազատվում ճանապարհածախսից։

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի նոյն հեղինակի «ԶԱՐԱԳՈՐԾՆԵՐԸ ԵՒ ԶՈՀԵՐԸ»։ (Հ.-ու.-կ.) 298. 3—1

ՄԻ ՇԱՏ ՉՔԱՒՈՐ ՀԱՅՈՒՀԻ
իր զաւակների օրվայ պարէնը հայթայթելու համար
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
կարելու պատուէրներ,
որ կատարում է շատ մաքուր և տրված օրինակի համաձայն։
Հասցէն՝ Սուրբ-Կարապետի վերևը, № 15.
Սօֆիա Գրիգորեանց։
(Հ.) 283. 2—2

Հինգշաբթի, մայիսի 3-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԱՄԱՌԱՅԻՆ ԱՅԳՈՒՄ տեղի կունենայ
ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ
ուժեղացնելու Թիֆլիսի իգական գիմնազիաների աշակերտուհիների համար Մանգլիսում հիմնված ամառային գաղութի միջոցները։ Զբօսանքի սկիզբն է ցերեկվայ ժամը 3-ին։ ԾՐԱԳԻՐԸ՝ զինուորական նուագախումբ, բալալայկաների խումբ, պրօժեկտոր, բազար, օդերի խաղ, պատ-շվօ, պօստ, ծաղկեվաճառ, բուֆէտ, մանկական խաղեր, հրախաղութիւն։
Մուտքի վճարը 25 կոպ., մանուկներից և աշակերտներից 15 կոպ.։
3—2 (Կ. Հ. Հ.) Կարգադրուհի՝ Զ. ՌՈՒԴՈԼՖ

Բ., Տ. եւ Ի. Վարդանովների Առեւտրական Տունը
հրաւիրում է ցանկացողներին՝ ստանձնել Կախէտինսկայա հրապարակի և Մետեխսկայա փողոցի անկիւնում կառուցվող տան աշխատանքները։ Պայմանները, ծրագիրը և աշխատանքների ցուցակը կարելի է տեսնել ամեն օր առաւօտեան ժամը 9-ից մինչև ցերեկվայ ժամը 2-ը։ Աճրդախօսութիւնը կը լինի գրաւոր, փակ ծրարներով։ Ծրարներ ներկայացնելու վերջնական ժամանակամիջոցն է մայիսի 10-ը, ցերեկվայ ժամը 2-ը։ Հասցէն՝ Сіонская ул., Караванъ-сарай Ананова, № 46.
(Կ.) 300. 2—1

„ԲԻՒԶԱՆԴԻՈՆ“
ԱԶԱՏԱԿԱՆ ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ
Հիմնուած 1896 նոյեմբեր 1-ին

Ազգային, քաղաքական, գրական և տնտեսական օրաթերթ։ Տասնվեց տարիէ ի վեր կը հրատարակուի կանոնաւորապէս՝ տնօրէն-խմբագրապետութեամբ յայտնի հրապարակագիր պ. Բիւզանդ Քէչեանի, և Թիւրքահայ ամենէն աւելի տարածուած թերթն է։

Բաժանորդագրութեան պայմաններն են՝ Ռուսաստանի համար 14 րուբլի տարեկան, 7 րուբլի՝ վեցամսեայ, 3½ րուբլի՝ եռամսեայ։ Կարելի է ղրկել թղթադրամ կամ մանդա-փօսթ։

Բաժանորդագրութիւնք կը սկսին ամեն ամսոյ 1-ին, 10-ին և 20-ին։ Ապառիկ բաժանորդագրութիւն չկայ։

Դրամին հետ պէտք է ղրկել նաև բաժանորդին ֆրանսերէն որոշ գրուած հասցէն։

Դիմել՝ Rédaction du journal «Puzantion» Stamboul. Sultan Hamam, Constantinople (Turquie). (Հ. Հ.) 3—1

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ԴՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I	գ. 1 ր. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժինի, I և II հատորներ	1 ր. 50 կ.
3) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի	— 50 կ.
4) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ Քամալեանց Ս.-ի	— 50 կ.
5) ՋՀՈՒԴ-ԲՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի	1 ր. —
6) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի	— 40 կ.
7) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Արշակ Սաֆարեանի	1 ր. 50 կ.
8) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգմ. գերմ. Իս. Յարութիւնեանի	— 50 կ.
9) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտական վէպ Կամիլ Ֆլամարիոնի. թ. Հ. Առաքելեանի	1 ր. 50 կ.
10) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր. 20 կ.
11) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի	— 40 կ.
12) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդոյի, թարգմ. Հ. Առաքելեանի	— 60 կ.
13) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկ. Գ. Բաբեանի	
I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն	1 ր. —
II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, բառարան	1 ր. 60 կ.
14) ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, բժ. Ա. Բուդաղեանի	— 5 կ.
15) ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ խոլերայի մասին, բժ. Վ. Արծրունու	— 15 կ.
16) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի	— 50 կ.
17) ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ, Հ. Իբսէնի, թարգմ. Լ. Բաբայեանի	— 50 կ.
18) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգմ. Հ. Առաքելեանի	1 ր. —
19) ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Փ.-ի	— 40 կ.
20) ՆՇԱՆՎԱԾՆԵՐ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի	— 60 կ.
21) ԷԴՄՕՆՏ, ողբերգ. 5 գործ. Վ. Գ. Գէօթէի, թարգմ. Հմ. Մաժինեանի	— 50 կ.
22) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ, Լ. Ն. Տօլստոյի, թարգմ. Սուրխաթեանի	— 30 կ.
23) ԿՕՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), Լ. Ն. Տօլստոյի խմբագրութեամբ կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի	— 7 կ.
24) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՕՄԵԴԻ, ընտրված Լ. Տօլստոյի, թ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
25) ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԷԿ Է, Լ. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
26) ՔՈՅՐԵՐԸ, Լ. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի	— 5 կ.
27) ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Լ. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի	— 10 կ.
28) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի	1 ր. —
29) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի	— 40 կ.
30) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վիպագրութիւն), Ստ. Մալխասեանցի	— 20 կ.
31) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի	— 35 կ.
32) ԾՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով	— 15 կ.
33) ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ, Ե. վ. Տէր-Մինասեանի	— 25 կ.
34) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ. Մ.-ի	— 15 կ.
35) ՃԱՊՕՆԻԱ կամ Ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի	— 25 կ.
36) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 30 կ.
37) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	— 25 կ.
38) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ։ Մակ. եպ. Բարխուտարեանի	— 80 կ.

Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից 5 րուբլուց բարձր գումարի՝ կը ստանան 25% զեղչ։ 10 ր. բարձր գումարի պատուէր տուողները ստանում են 30% զեղչ։

«Մշակի» բաժանորդներից նրանք, որոնք վերոյիշեալ բոլոր գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն, կը ստանան 40% զեղչ։

ԾԱՆԱՊԱՐՀԱԾԱԽԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։ 50—18

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.